2024, ԱՊՐԻԼ Բ, ԹԻՎ 8 (652)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ – 109



***Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը՝ Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակի օրվա առիթով***

*Սիրելի՛ ժողովուրդ հայոց ի հայրենիս և ի սփյուռս,*

*Վերստին աղոթքով և խոնարհումով հիշատակում ենք Հայոց ցեղասպանության մեր սուրբ նահատակներին, որոնք ամուր պահելով իրենց հավատքը, սերն ու նվիրումը առ ազգն ու հայրենին՝ մարտիրոսության պսակն ընդունեցին:*

*Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակը նշում ենք մի շրջանում, երբ մեր ժողովուրդը գտնվում է գոյաբանական նոր սպառնալիքների և անվտանգային լրջագույն հիմնախնդիրների հանդիման: Հայրենի Արցախում իրականացված ցեղասպանական գործողություններից և Արցախի հայաթափումից հետո ներկայիս մտահոգիչ ծանր իրավիճակ է Հայաստանի սահմանային տարածքներում:*

*Սուրբ նահատակների լույս հիշատակի առջև մեր նվիրական պարտքն է՝ պաշտպանել ամբողջականությունը մեր հայրենի երկրի, նախանձախնդիր լինել հայոց անկախ պետականության զորացմանը և որպես սրբազան մասունք՝ պահպանել մեր նախնյաց ավանդներն ու ժառանգությունը:*

*Մեր ժողովուրդը հզոր է իր հերոսական անցյալով, չարի ու չարիքի դեմ պայքարի վճռականությամբ և նույն ոգով պիտի հեռացնի իր կյանքից ազգային շահերին հակառակ կործանարար դրսևորումները, առկա բարդ իրադրությունից ջանքերի մեկտեղումով ելքի ուղիներ գտնի և կերտի իր հաղթական ապագան:*

*Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, այս նվիրական օրը միասիրտ աղոթքով հայցենք մեր սուրբ նահատակների բարեխոսությունը, որ հարուցյալ Քրիստոսի շնորհների և օրհնության ներքո խաղաղ, անվտանգ ու բարօր լինեն մեր հայրենիքն ու ազգը, և մենք հավատով ու հույսով հաստատենք մեր ընթացքը ապահովության ու առաջընթացի շավիղներում:*

*Թող Տիրոջ սերն ու խնամքը հովանի լինեն մեր հայրենիքին ու համայն մեր ժողովրդին այսօր և միշտ. ամեն:*

### *Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների ոգեկոչման արարողությունները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում*

Ապրիլի 24-ին, Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակի օրվա առիթով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, սուրբ պատարագի արարողությանը մասնակցեց Սուրբ Գայանե վանքում: Այդ առիթով հավատացյալների խոնարհումի համար դուրս էր բերվել նաև Հայոց ցեղասպանության սրբոց նահատակաց մասունքարանը:

Պատարագիչն էր Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային բաժնի տնօրեն Տ. Վազգեն արք. Միրզախանյանը:

Իր քարոզում սրբազան հայրը, անդրադառնալով 20-րդ դարասկզբի պատմական իրադարձություններին ու Հայոց ցեղասպանությանը, ի մասնավորի նշեց. «Աստված օրհնեց մեր ժողովրդին և վերականգնեց հայոց պետականությունը պատմական Հայաստանի արևելյան հատվածում, մեր ժողովուրդը կարողացավ պահպանել իր պատմական հողերի այս մի հատվածը և ամոքել իր վերքերը:

Ինչո՞ւ տեղի ունեցավ Հայոց ցեղասպանությունը. մենք դրա մասին պիտի մտածենք, խորհենք, որպեսզի ապագայում կարողանանք խուսափել նման իրավիճակներից և թույլ չտանք օտարներին մեր հայրենիքում ենթարկել մեզ ցեղասպանության.... Երբ մենք գնում ենք Ծիծեռնակաբերդ կամ Եռաբլուր, խորհենք, թե ինչ պիտի անենք, որ չարեցինք և ի՞նչ ունենք անելու, որ պիտի անենք՝ գալիքի ակնկալիքով: Չվախենանք երբեք և շարունակենք ապրել Քրիստոսով, որովհետև Նա հաղթեց, ու մենք էլ հաղթելու ենք»:

Վերջում Վազգեն սրբազանը պատգամեց հավատավոր ժողովրդին խնդրել ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսությունը, որ առավել իմաստությամբ օժտվեն մեր առաջնորդները, որ հայ ժողովուրդը լցվի սիրով, համերաշխությամբ և կարողանա պահել ու պահպանել Հայաստան աշխարհը:

Սուրբ պատարագի ավարտին եկեղեցականների թափորը, կրելով սուրբ նահատակների մասունքարանը, ուղղվեց դեպի Մայր տաճարի շրջափակ, ուր Աղոթքի և ուխտի խաչքարի առջև, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսական կարգ:

### *Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր*

Ապրիլի 24-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ ոգեկոչելու Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակը:

Հուշահամալիրում ծաղկեպսակի զետեղումից հետո Նորին Սրբության նախագահությամբ կատարվեց Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսական կարգ:

Օրվա առիթով Ծիծեռնակաբերդի հուշահամալիր էր բերվել նաև Հայոց ցեղասպանության սրբոց նահատակաց մասունքարանը:

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*Ապրիլի 16-ին*

### Հայաստանում ԵՄ-ի դիտորդական առաքելության ղեկավարին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Եվրամիության քաղաքացիական դիտորդական առաքելության ղեկավար Մարկուս Ռիտերին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունեց պրն. Մարկուս Ռիտերի այցը համայն հայության հոգևոր կենտրոն՝ նշելով, որ այս հանդիպումը պատեհ առիթ է ծանոթանալու ԵՄ-ի դիտորդական առաքելության առջև դրված խնդիրներին:

Վեհափառ Հայրապետն իր մտահոգությունը հայտնեց առկա լարվածության և սահմանամերձ բնակավայրերի ժողովրդի ապահովության առնչությամբ՝ ընդգծելով, որ Ադրբեջանի ոտնձգություններն ու առաջադրվող պահանջները անվտանգային նոր մարտահրավերների առջև են կանգնեցնում Հայաստանին, նաև վտանգում խաղաղության հաստատման բանակցային գործընթացը:

Նորին Սրբությունը գնահատեց բոլոր այն ջանքերը, որ տիրող դժվարին իրավիճակում բարեկամ երկրների և միջազգային կառույցների աջակցությամբ ուղղվում են ի նպաստ տարածաշրջանում խաղաղության ու կայունության վերականգնման:

Իր հերթին ԵՄ-ի դիտորդական առաքելության ղեկավարը Վեհափառ Հայրապետին տեղեկություններ փոխանցեց դիտորդական առաքելության գործունեության և սահմանային իրավիճակի վերաբերյալ՝ վստահեցնելով, որ առաքելության կողմից կարելին ի գործ կդրվի՝ նպաստելու սահմանային լարվածության նվազեցմանն ու Հայաստանի սահմանամերձ շրջաններում կայունության հաստատմանը:

*Ապրիլի 19-ին*

### «Կարիտաս Գերմանիա» կազմակերպության անդամներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Կարիտաս Գերմանիա» կազմակերպության պատվիրակության անդամներին՝ գլխավորությամբ Կարիտասի միջազգային գրասենյակի դրամաշնորհների գլխավոր պատասխանատու պարոն Անդրեաս Բրենդերի:

Ողջունելով հյուրերին՝ Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց կազմակերպությանը Հայաստանին և հայ ժողովրդին այս ծանր ժամանակաշրջանում ցուցաբերվող աջակցության համար:

Խոսելով բռնի տեղահանված արցախահայության առջև ծառացած մարտահրավերների մասին՝ Հայոց Հայրապետը կարևորեց վերջիններիս արդար իրավունքների պաշտպանությունը՝ նյութական օժանդակությանը զուգահեռ:

Հանդիպմանը Հայոց Հովվապետն անդրադարձ կատարեց նաև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու միջև առկա եղբայրական հարաբերություններին ու գործակցությանը:

«Կարիտաս Գերմանիա» կազմակերպության պատվիրակության անդամ մոնսինյոր դոկտոր Հայնց Դետլեֆ Ստեպսը Նորին Սրբությանը տեղեկություններ փոխանցեց կազմակերպության կողմից իրականացվող աջակցության ծրագրերի մասին՝ կարևորելով սոցիալական արդարության և համերաշխության հաստատումը մարդկային կյանքում:

*Ապրիլի 21-ին*

### ՀՅԴ-ի՝ Հայաստանի երիտասարդական միության անդամներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայ հեղափոխական դաշնակցության՝ Հայաստանի երիտասարդական միության անդամներին՝ ուղեկցությամբ ՀՅԴ-ի՝ Հայաստանի Գերագույն մարմնի ներկայացուցիչ Իշխան Սաղաթելյանի:

Իր հայրական օրհնությունը փոխանցելով միության ներկայացուցիչներին՝ Նորին Սրբությունն ընդգծեց, որ վերջիններիս այցը հայոց հոգևոր կենտրոն վկայությունն է Հայ Եկեղեցու հանդեպ որդիական սիրո և հավատարմության:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը բերեց երիտասարդներին՝ ամեն տարի՝ ապրիլի 23-ին, դեպի Ծիծեռնակաբերդի բարձունք ջահերով երթի կազմակերպման համար, որով բազում հայորդիներ, առաջնորդությամբ նաև եկեղեցականների, իրենց հարգանքն ու խոնարհումն են բերում Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակին: Նորին Սրբությունը նշեց, որ Հայոց ցեղասպանության զոհերի սրբադասմամբ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը նոր խորհուրդ է ստացել, դարձել հայ ժողովրդի հոգու, մտքի, գիտակցության պայծառակերպության սրբավայր, հոգևոր ուժի և զորության ակունք: Եվ այս նվիրական վայրում հայցում ենք մեր նահատակների բարեխոսությունը, որ առ Աստված հավատքով և ապավինությամբ կարողանանք միասնաբար դիմակայել հայրենիքի և մեր ժողովրդի առջև ծառացած մարտահրավերներին, իրականություն դարձնել համազգային մեր նվիրական իղձերը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաև կարևոր համարեց, որ աշխարհասփյուռ հայ ժողովուրդն ամենուր շարունակի համախումբ ջանքեր գործադրել հանուն Հայոց ցեղասպանության դատապարտման, աշխարհում ցեղասպան նոր ոճրագործությունների կանխարգելման և արդարության հաղթանակի:

Հանդիպմանը Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց նաև Հայաստանի առջև ծառացած մարտահրավերներին, անվտանգային սպառնալիքներին: Հայոց Հայրապետն ընդգծեց, որ տիրող ծանր իրավիճակից հնարավոր է դուրս գալ միմիայն հայրենիքի ապագայի տեսլականի շուրջ համազգային միաբանության հաստատման ճանապարհով՝ հեռացնելով մեր կյանքից ատելությունն ու թշնամանքը, հատվածական շահերի նկրտումները: Առկա իրադրության մեջ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հրամայական նկատեց հոգևոր վերարթնությունը՝ հորդորելով երիտասարդներին ակտիվորեն ներգրավվել հոգևոր-եկեղեցական կյանքում՝ միշտ ամուր պահելով հավատքն առ Աստված, սերն ու նախանձախնդրությունը ազգային ու հոգևոր արժեքների, նախնյաց ավանդների ու ժառանգության նկատմամբ:

Հանդիպմանը Հայոց Հայրապետը պատասխանեց երիտասարդների հարցերին, որոնք վերաբերում էին Եկեղեցու հոգեխնամ և ազգապահպան առաքելությանը, հայրենիքի առջև ծառացած մարտահրավերների հաղթահարմանն ուղղված Մայր Աթոռի ջանքերին, Եկեղեցի—պետություն հարաբերություններին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերստին իր օրհնությունը բաշխեց հայորդիներին՝ աղոթելով, որ հարուցյալ Տիրոջ ամենախնամ Սուրբ Աջը հովանի լինի մեր հայրենիքին և ողջ հայոց ազգին:

*Ապրիլի 23-ին*

### Մարսելի արքեպիսկոպոսին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մարսելի արքեպիսկոպոս կարդինալ Ժան Մարկ Ավելինի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը ներկա էր նաև ՀՀ-ում Սուրբ Աթոռի գործերի ժամանակավոր հավատարմատար հայր Ալիաքսանդր Ռահինիան:

Ողջունելով հյուրերին՝ Նորին Սրբությունը նկատեց, որ պատվիրակության այցը Հայաստան տեղի է ունենում նվիրական այս օրերին, երբ հայ ժողովուրդը ոգեկոչում է Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակը: ➥ էջ 3

## Մարսելի արքեպիսկոպոսին

↩ էջ 2

Խոսելով մեկ դար առաջ տեղի ունեցած ոճրագործության մասին՝ Վեհափառ Հայրապետը ցավով անդրադարձավ հայ ժողովրդի կյանքում տեղ գտած մի նոր ցեղասպանությանը՝ Ադրբեջանի կողմից իրագործված էթնիկ զտումներին և Արցախի հայաթափմանը: Նորին Սրբությունը, անդրադարձ կատարելով նաև Հայաստանի առջև ծառացած մարտահրավերներին ու անվտանգային խնդիրներին, վստահություն հայտնեց, որ առ Աստված ապավինությամբ և առ հայրենին ունեցած սիրով, ինչպես նաև բարեկամ ժողովուրդների աջակցությամբ հայ ժողովուրդը կկարողանա հաղթահարել առկա դժվարությունները:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց Հռոմի Կաթոլիկ Եկեղեցուն՝ այս դժվարին օրերին Հայաստանին ու արցախահայությանը ցուցաբերվող զորակցության համար:

Զրույցի ընթացքում կարդինալ Ժան Մարկ Ավելինը, ի դեմս Ֆրանսիայի Կաթոլիկ Եկեղեցու, իր զորակցությունը հայտնեց հայ ժողովրդին և Հայոց Հայրապետին: Կարդինալն անդրադարձավ նաև Մարսելի հայ համայնքի և Կաթոլիկ Եկեղեցու ջերմ հարաբերություններին և գործակցությանը:

Վերջում Հայոց Հովվապետն իր եղբայրական ողջույններն ու բարեմաղթանքները փոխանցեց Հռոմի Սրբազան Քահանայապետին:

*Ապրիլի 25-ին* **Մայր Աթոռում վերապատրաստման դասընթացներին մասնակից եկեղեցականներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց երեքշաբաթյա վերապատրաստման դասընթացներին մասնակից քահանաներին, որոնք ժամանել էին Հայաստանի և Սփյուռքի տարբեր թեմերից:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնի տնօրեն Տ. Վահան եպս. Հովհաննիսյանը, հայցելով Նորին Սրբության օրհնությունը, խոսեց վերապատրաստման դասընթացների կարևորության և դրանց արդյունավետության մասին:

Այնուհետև Նորին Սրբությունը, իր հայրական օրհնությունը բերեց եկեղեցականներին՝ գոհունակությամբ արձանագրելով, որ դասընթացները հնարավորություն են ընձեռում քահանա հայրերին՝ թարմացնելու իրենց գիտելիքները, քննարկելու հովվական կյանքին առնչվող զանազան հարցեր, ինչպես նաև հարստանալու նոր գիտելիքներով և միմյանց փորձառությամբ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատգամեց հոգևորականներին հայ ժողովրդի համար այս ծանր ժամանակաշրջանում առավել նախանձախնդրորեն իրականացնել իրենց հովվական ծառայությունը՝ ուղղորդելով հայրդիներին ճշմարտության ճանապարհով, մխիթարություն պարգևելով հոգեկան ծանր ապրումների մեջ գտնվող մեր զավակներին և չհանդուրժելով անտարբերության որևէ դրսևորում:

Վեհափառ Հայրապետը եկեղեցականներին հորդորեց նաև բարձր գիտակցումով, քաջաբար և ամբողջանվեր կերպով իրականացնել իրենց սրբազան առաքելությունը՝ ի զորացումն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և ի բարօրություն հայ ժողովրդի:

Հանդիպման վերջում Նորին Սրբությունը պատասխանեց քահանա հայրերի հարցերին, որոնք առնչվում էին Մայր Աթոռի կողմից իրականացվող հոգեխնամ և կրթական ծրագրերին:

*Ապրիլի 27-ին* **«Դիվանագետների համահայկական խորհուրդ» ՀԿ-ի անդամներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Դիվանագետների համահայկական խորհուրդ» (ԴՀԽ) հասարակական կազմակերպության անդամներին:

Հանդիպմանը ԴՀԽ-ի նախագահ տիար Գուրգեն Մելիքյանը Հայոց Հայրապետին ներկայացրեց կազմակերպության նպատակներն ու ծրագրերը՝ հայցելով Նորին Սրբության օրհնությունը նորաստեղծ խորհրդի արդյունավոր գործունեության համար:

Իր հայրական օրհնությունը բերելով ՀԿ-ի անդամներին՝ Նորին Սրբությունն անդրադարձավ հայրենիքի առջև ծառացած մարտահրավերներին, հայ ժողովրդի արդար իրավունքների պաշտպանության հիմնախնդիրներին ու անվտանգային սպառնալիքներին: Հայոց Հայրապետը կարևորեց հայ դիվանագետների ջանքերը արտաքին գործընթացների մասնագիտական վերլուծության և լուծումներ գտնելու ուղղությամբ՝ ի պաշտպանություն մեր ժողովրդի արդար իրավունքների:

Այս առնչությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը տեղեկացրեց, որ Արցախի թեմը թեմական խորհրդի հետ միասին շարունակում է միջազգային և միջեկեղեցական հարթակներում քայլեր ձեռնարկել՝ ի խնդիր արցախահայերի իրավունքների պաշտպանության և Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանության:

Զրուցակիցները կարևորությամբ անդրադարձան նաև Հայոց ցեղասպանության ճանաչման, արցախահայերի իրավունքների պաշտպանության և Ադրբեջանում պահվող հայ գերիների վերադարձման ուղղությամբ ջանքերի ներդրմանը:

*Ապրիլի 27-ին* **Բրազիլական ՁԼՄ-ների ներկայացուցիչներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց բրազիլական տարբեր լրատվամիջոցների ներկայացուցիչներին՝ ուղեկցությամբ Հայ բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) հայաստանյան մասնաճյուղի տնօրեն տիար Վազգեն Յակուբյանի և Բրազիլիայի ՀԲԸՄ-ի մշակութային գծով տնօրեն տիար Նորայր Շահինյանի:

Հանդիպմանը տիար Յակուբյանը նշեց, որ հյուրերի՝ Հայաստան այցի նպատակն է ի մոտո ծանոթանալ հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին և երկրում տիրող իրավիճակին, ինչպես նաև լուսաբանել Հայոց ցեղասպանության ոգեկոչման արարողությունները:

Խոսելով 20-րդ դարասկզբում Թուրքիայի՝ հայերի նկատմամբ իրականացրած ոճրագործության մասին՝ Նորին Սրբությունն ընդգծեց, որ հայ ժողովրդի արդար սպասումն է ինչպես միջազգային հանրության՝ Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը, այնպես էլ համապատասխան գնահատական տալը հայ ժողովրդի կյանքում տեղ գտած մի նոր ցեղասպանության՝ Ադրբեջանի կողմից Արցախի բռնազավթմանը, իրագործված էթնիկ զտումներին և հայկական հոգևոր-մշակութային արժեքների ոչնչացմանը:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ բրազիլական լրատվամիջոցները ևս իրենց լսարանին կներկայացնեն տարածաշրջանում և Հայաստանում առկա իրավիճակը, կբարձրաձայնեն արցախահայության իրավունքների պաշտպանության և գերիների վերադարձման խնդիրները:

Վերջում Նորին Սրբությունը պատասխանեց հյուրերի հարցերին, որոնք առնչվում էին Հայոց ցեղասպանության ճանաչմանը, Հայ Եկեղեցու գործունեությանը և միջեկեղեցական փոխհարաբերություններին:

*Ապրիլի 28-ին* **«Հովնանյան» վարժարանի սաներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Հովնանյան» վարժարանի (Նյու Ջերսի, ԱՄՆ) սաներին:

Նորին Սրբությունը գոհունակությամբ ընդգծեց, որ վարժարանի շրջանավարտ սաների՝ ավանդույթ դարձած այցելությունները Հայաստան հնարավորություն է պատանիների համար սեփական աչքերով տեսնելու այն ամենը, ինչ սովորել են կրթօջախում Հայաստանի ու նրա պատմության մասին, հաղորդ դառնալու հոգևոր ժառանգությանն ու սրբություններին և պահպանելու ազգային ինքնությունը: Հանդիպմանը Վեհափառ Հայրապետն աշակերտներին պատգամեց զորանալ հայրենաճանաչությամբ, իրենց սերն առատացնել հայրենիքի նկատմամբ և ջանասիրությամբ շարունակել իրենց ուսումնառությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաև իր գնահատանքը հայտնեց «Հովնանյան» վարժարանի պաշտոնեությանը, մանկավարժներին և սաների ծնողներին՝ հայեցի կրթություն ապահովելու և եկեղեցասեր սերունդ դաստիարակելու համար:

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Արագածոտնի թեմի Ուշի համայնքի Սուրբ Սարգիս վանական համալիր

Ապրիլի 20-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Արագածոտնի թեմի Ուշի համայնքի Սուրբ Սարգիս վանական համալիր:

Վանական համալիրի ամբողջական վերականգնման աշխատանքներն իրականացվում են Վարդանյան և Մկրտչյան ընտանիքների հովանավորությամբ և աջակցությամբ: Նախագծի հեղինակներն են վերականգնող ճարտարապետներ Սամվել Այվազյանը և Ամիրան Բադիշյանը: Առաջին փուլում կվերականգնվի

վանական համալիրի Սուրբ Աստվածածին եկեղեցին:

Նորին Սրբությունն իր այցի ընթացքում ծանոթացավ իրականացվող աշխատանքներին:

Հայոց Հայրապետը նաև իր օրհնությունը բաշխեց նախագծի բարերարներին, ճարտարապետներին և շինարարներին՝ մաղթելով, որ աշխատանքները բարեհաջող ավարտին հասնեն, և նվիրական այս ուխտավայրն իր հրաշագործ զորությամբ ամրացնի հույսն ու հավատքը մեր ժողովրդի և պահապան ու օգնական լինի՝ հաղթահարելու ներկա ծանր փորձությունները:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Մկրտիչ եպս. Պռոշյանը, Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ եպս. Բաբայանը և Սուրբ Էջմիածնի միաբաններ:

## Հայտարարություն

Տավուշում ընթացող զարգացումների համատեքստում ՀՀ իշխանությունների առանձին ներկայացուցիչներ և նրանց ձայնակցող այլազան անհատներ ստի ու կեղծիքի տարածման միջոցով արշավ են ձեռնարկել Հայ Եկեղեցու՝ ի մասնավորի Տավուշի թեմի առաջնորդի նկատմամբ, որը հանդես է գալիս հայրենիքի անվտանգության և իր թեմի հավատավոր զավակների իրավունքների պաշտպանության մտահոգությամբ:

Հորդորում ենք դադարեցնել անվայել և պախարակելի գործելաոճը, որը միմիայն անհամերաշխություն և ատելություն է սերմանում անվտանգային սպառնալիքներ դիմագրավող մեր հասարակության մեջ:

**Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգ**

## Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների նշանակումներ:

Տ. Անանիա վրդ. Ծատուրյանը, ազատվելով գավազանակրի պարտականություններից, ծառայության է կոչվել ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմում:

Տ. Եսայի աբդ. Գրիգորյանը, ազատվելով Արարողակարգային բաժնի գործավար-քարտուղարի պարտականություններից, նշանակվել է գավազանակիր:

Տ. Գրիգոր աբդ. Մինասյանը նշանակվել է Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանձնակատար:

## Անտիպ նամականի Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի և Գաբրիել Նորատունկյանի միջև՝

### Ջեմալ փաշայի կողմից բռնագրավված և թուրքահպատակ Կարկուրի հայցով հայոց վանքապատկան հողերի շուրջ սկսած դատական գործի մասին

**27 հոկտեմբեր 1921, Փարիզ**
**Ամենապատիւ Տ. Եղիշէ Ս. արքեպիսկոպոս պատրիարք Ս. Երուսաղէմի, Երուսաղէմ**

Ամենապատիւ Ս. Հայր.

Ժամանակին ստացայ Ձեր Սեպտեմբեր 28 եւ Գեր. Աղաւնունի Սրբազանի Օգոստոս 23 թուակիր գրութիւնները, յարակից պատճէններով: Պատասխանս ուշացաւ, որովհետեւ ստիպուեցայ Ժընէվ մեկնիլ Ազգերու Ընկերակցութեան Ընդհ. ժողովին գումարման առթիւ: Միւս կողմէ, կը յուսայի աւելի կանուխ անցնիլ Լոնտոն, եւ այնտեղ, Պաղեստինի դատարաններու եւ անոնք իրաւասութեան սահմանին վրայ մօտէն տեղեկութիւն առնելէ ու ձեռնհաս պաշտօնատան մօտ անհրաժեշտ դիմումները անձամբ ընելէ վերջ գրել Ձեզի: Բայց որովհետեւ ճամբորդութիւնս ուշացաւ, կը փութամ առ այժմ Ձերդ Բարձր Սրբազնութեան ուշադրութեան ներկայացնել հետեւեալ նկատողութիւնները.-

Կարծեմ 1885-ին էր, ժամանակին Պատրիարք Վեհապետեան Արքեպիսկոպոսի խնդրանօք Կարկուռի այդ խնդրին նկատմամբ գումարումներ ունեցանք մեր բնակարանը: Որքան որ կը յիշեմ, այդ գումարմանց ներկայ էին Վճռաբեկ Ատենի անդամ Շահպազ էֆէնտի, Պետական Խորհրդական Նուրեան էֆենտի, Առեւտրական Դատարանի անդամ Տիգրան էֆենտի Եուսուֆեան, Վերաքննիչ Ատենի անդամ Խօրասանձեան Թովմաս էֆենտի, Պոլսոյ առաջնակարգ փաստաբաններէն Մէրեէմ-Գուլի Աղեքսանդր էֆենտի եւ ուրիշ մէկ երկու հայ իրաւագէտներ: Մեր խորհրդակցութեանց ընթացքին առիթ ունեցանք հաստատելու թէ Կարկուռի ոտնձգութեանց դէմ առաջին օրէն հարկ եղած զգուշական միջոցները ձեռք չէին առնուած վանքին եւ ազգ. իշխանութեանց կողմէ: Հարկ տեսանք խնդիրը դուրս հանել Շէրիի դատարանին իրաւասութեան շրջանակէն, որուն մէջ մնալով վանքին աննպաստ ընթացք մը առեր էր, եւ բերել Պետական խորհրդոյ առջեւ, վարչական եղանակով որոշում մը ձեռք ձգելու մտադրութեամբ: Այս մասին մեզի համակարծիք գտնուեցաւ նաեւ Ժամանակին Դատական նախարարութեան խորհրդական Վահան էֆենտի Արզումանեան:

Մեր մտածումը գործադրութեան դրուելով, յաջողութեամբ պսակուեցաւ, որովհետեւ Պետական խորհուրդը, ինչպէս յայտնի է, Կարկուռի կողմէ ձեռք բերուած Շէրիի վճիռը վանքին դէմ անզօր ու անգործադրելի նկատեց եւ որոշեց առ ոչինչ գրել, անհետեւանք թողլով: Պետական խորհրդոյ այս որոշումը հաստատուեցաւ Եպարգոսական հրամանագրով եւ կերպով մըն ալ Կայսերական վաւերացման առարկայ դարձաւ, քանի որ ետքէն, Սուլթանին մէկ Իրատէով վանքին արտօնութիւն տրուեցաւ խնդրոյ առարկայ գետնէն մաս մը ծախելու եւ մնացած մասին վրայ ալ շէնք շինելու:

Ներկայիս, նկատողութեան առնուելիք օրինական գլխաւոր կէտը հետեւեալն է.

Ըստ որում Շէրիի դատարանները ամէն կարգի եւ տեսակի խնդրոց մէջ ինքզինքն ձեռնհաս նկատելու եւ վճիռ տալու հակում ունին. Օսմ. Տէրութիւնը հարկ տեսած է նախ, որ Շէրիի դատարաններու տրուելիք խնդրագիրները Ատլիէի պաշտօնատան խողովակէն անցնին. եւ երկրորդ, որ Շէրիի դատարաններուն կողմէ տրուած վճիռներուն գործադրութիւնը տեղի ունենայ Ատլիյէի պաշտօնատան միջոցաւ, որպէս զի կարելի ըլլայ տեսնել թէ Շէրիի դատարանը իր ձեռնահասութեան սահմանէն դուրս ելած է թէ ոչ, եւ թէ օրինական ուեւէ թերութիւն սպրդած է վճռին մէջ: Տեսակ մը վերին հսկողութիւն կամ հակակշիռ է ասիկա զոր Քաղաքային արդարութիւնը կը կատարէ Շէյխ-իլ-Իսլամութեան դատարաններուն վրայ:

Ահա այս էր պատճառը որ այն թուականին Պետական Խորհուրդը միջամուխ եղաւ վանքին արտի խնդրին, եւ վարչական եղանակով որոշեց անհետեւանք թողուլ Կարկուռի ձեռք բերած Շէրիի վճիռը, ինչ որ Շէյխ-իլ-Իսլամութեան դատարանէ բղխած վճիռ մը ջնջելու համար ընդունած միակ ձեւն է Թուրքիոյ մէջ:

Այս կէտը պէտք է լաւ պարզաբանել տեղւոյդ կառավարութեան, ապացուցանելու համար թէ Կարկուռենց ձեռքը գտնուած Շէրիի վճռագիրը ո եւ է օրինական հիմ չի կրնար դառնալ, քանի որ Թուրքիոյ պետական բարձրագոյն հեղինակութիւնը չէ ընդունած եւ գործադրելի չէ գտած զայն: Պաղեստինի կառավարութիւնը պարտաւոր է յարգել եւ ընդունիլ իրմէ առաջ գոյութիւն ունեցող պետական հեղինակութեան այս որոշումը որ արդէն անվերաքննելի է, եւ անլսելի պէտք է թողուլ Կարկուռենց արտի անտեղի պահանջումը: Հարկ է ըսել նաեւ այս առթիւ որ եթէ Օսմանեան տիրապետութիւնը շարունակուէր Պաղեստինի մէջ, ինչ ձեւ ալ ունենար այդ տիրապետութիւնը, անհնար էր ուեւէ դատարան ինքզինքը ձեռնհաս նկատէր Կարկուռենց յաւակնութիւնը քննելու:

Ըստ մեզ, այս պարագան բաւական է խնդիրը միանգամ միշտ փակուած համարելու համար, եւ Պաղեստինի կառավարութիւնը օրինական տեսակէտով իրաւունք չունի վերաքննութեան ձեռնարկելու:

Սակայն, եթէ հակառակ ամէն ակնկալութեան վերաքննութեան վրայ պնդուի, կարելի է արժեցնել նաեւ հետեւեալ նկատողութիւնները.-

1.— Դատարանաց ձեռնհասութեան խնդիրները Թուրքիոյ մէջ, Անգլիոյ նման չեն: Թուրքիոյ մէջ, Քրիստոնեայ հասարակութեանց մասնաւոր առանձնաշնորհմանց պատճառաւ եւ իսլամ ու ոչ-իսլամ դաւանութեանց ներքին կազմակերպութեանց զանազանութեան հետեւանօք, կարելի չէ ամէն խնդիր դատարանով վճռել: Յաճախ, Վարչութիւնը կը միջամտէ դատարանի գործերուն, նոյն իսկ տրուած վճիռներուն, եւ զանոնք անհետեւանք կը թողու, որպէս զի արդարութիւնը ձեւերու կամ Քրիստոնեայ հասարակութեանց կազմակերպութեան ոչ-համապատասխան կարգերու տարբերութեանց չզոհուի: Ներկայ խնդրին մէջ, վարչական եղանակ մը անհրաժեշտ դարձած էր արդարութիւնը փրկելու եւ Երուսաղէմի վանքը իր արդար իրաւունքէն չզրկելու համար: Ինչ-որ վարչական եղանակով որոշուած էր, հիմայ դատական ճամբու մէջ մտցնելը օրինական չէ, վասն զի, ոտնձգութիւն կը լլլայ մէկ իշխանութեան կողմէ ուրիշ իշխանութեան մը իրաւասութեանց մէջ: Թուրքիոյ մէջ, Շէրին արդէն ենթակայ է վարչական իշխանութեան, եւ ասիկա պէտք է լաւ հասկցնել Անգլիացւոց որոնք իրենց երկրին մէջ ընդունուած դրութիւնը աչքի առջեւ ունենալով կը կարծեն թէ վարչական իշխանութիւնն է որ ենթակայ է դատականին: Հարկ է բացատրել նոյնպէս որ Շէրին արտասովոր եւ բացառիկ դատարան մըն է որուն ձեռնհասութիւնը, թէ Խաթթը Հիւմայունով եւ թէ Եւրոպական Մեծ Տէրութեանց խնդրանօք, խիստ սահմանափակուած է: Օգտակար կը լլլայ նաեւ դիտել տալ թէ Թուրքիոյ մէջ, հողային խնդիրներու ձեռնհասութիւնը Շէրիին չի պատկանիր, այլ Հուգուգի դատարաններուն:

2.— Յայտնի է որ մուրհակ եւ համանման ուրիշ թուղթեր եթէ 15 տարի շարունակ հետապնդուած չըլլան, Միւրիրի-զէմանի օրէնքին կենթարկուին, այսինքն կը կորսնցնեն ամէն ոյժ: Նոյնը կարելի ըսել նաեւ ուեւէ դատական վճռի մասին, քանի որ անոնց համար ալ սահմանուած է որոշ շրջան մը որուն ընթացքին եթէ գործադրութեան չդրուին, կը կորսնցնեն իրենց ոյժը: Կարկուռենք որոնք այդ թուականէն ի վեր լուռ մնացած են, ինչպէս կրնան ձայն հանել հիմայ, երբ իրենց ձեռքը գտնուող ձեռագիրը, ժամանցման պատճառաւ, կորսնցուցած է իր ոյժը: Եթէ առարկեն որ Սուլթան Համիտի օրով կարելի չէր վարչական որոշման մը դէմ բողոքել եւ թէ իրենք միջոց մը աքսորի մէջ մնացին քաղաքական-քրէական պատճառներով, ապա ուրեմն ինչու ձայն չհանեցին 1908-ին եւ անկէ աստին սահող 13 տարիներու ընթացքին, երբ Օսմ. Սահմանադրութեան վերահաստատմամբ այլեւս Ապտիւլ Համիտի շրջանը փակուած էր եւ ամէն օսմանեան քաղաքացի ազատ էր իր իրաւանց պաշտպանութիւնը հետապնդելու: Այս կէտն ալ. եթէ պէտք մնայ, լաւ կը լլլայ որ բացատրուի տեղական կառավարութեան:

3.— Երուսաղէմի Պատրիարքութեան Պէրաթին մէջ ըսուած ըլլալով որ իրեն վերաբերեալ դատերը Պոլսոյ Շէյխ-իլ-Իսլամութեան առջեւ տեսնուին, տարակոյս չկայ որ Երուսաղէմի Գատը, այն է Շէրիի դատարանը, ի սկզբանէ անտի միշտ ձեռնհասութիւն ունեցած չէ Պատրիարքական Աթոռին պատկանող դատ մը վճռելու: Հետեւաբար, եթէ երբէք մեր վերոգրեալ առաջին օրինական առարկութիւնը չընդունուի եւ անպատճառ դատարանով լուծուելու կէտին վրայ շարունակեն պնդել, այդ պարագային հարկ կը ծագի.... ➥ էջ 12

# ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՎԱՍՆ ՀԱՅՐԵՆՅԱՑ

## Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ճեպազրույցը Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում

Սիրելիներ, առկա անվտանգային սպառնալիքներին հանդիման՝ լինենք համերաշխ, լինենք միաբան ու միասնական, որպեսզի կարողանանք անկորուստ պահպանել հայրենի մեր երկիրը և անխռով՝ ազգային մեր կյանքը: Մեր պատգամն ենք բերում իշխանություններին. ինչպես Սուրբ Վարդան Մամիկոնյան քաջ զորավարը պիտի ասեր, արիությանը վախկոտություն մի՛ խառնեք: Վախկոտությունը կորստաբեր է, մա՛հ է սփռում: Արիությունը ոգու զորություն է՝ արդարությունն ու ճշմարտությունը պաշտպանելու համար:

Սիրելի՛ ժողովուրդ հայոց, ապրենք առ Աստված ապավինությամբ, հավատքով ու հույսով հզո՛ր, աննկո՛ւն: Չտկարանանք դժվարությունների առջև: Մեր սուրբ նահատակների բարեխոսությամբ Աստված երկնային բարձունքներից հեղելու է մեր կյանքին խաղաղության, ապահովության ու անվտանգության իր օրհնությունները: Մշտահո՛ւնչ պահենք մեր հոգիներում և մեր սրտերում աղոթքն առ Աստված: Աստված միշտ օգնական է լինելու և պահապան է լինելու մեր ժողովրդին: Այսօր և հավիտյան, ամե՛ն....

## Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ արք. Խաչատրյանի խոսքը՝ Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակների հիշատակության օրվա նախօրեին՝ ջահերով երթի ժամանակ

Սիրելի՛ հայրենակիցներ, քույրեր և եղբայրներ,

«Ինչ լավ է, 50 մետր այն կողմ Ադրբեջանն է, մենք այնտեղ առևտուր կանենք...»,— մի քանի օր առաջ՝ ապրիլի 17-ին, Տավուշի սահմանամերձ Կիրանց գյուղում բնակիչների հետ հանդիպման ժամանակ անասելի ոգևորությամբ հայտարարեց ՀՀ-ի ղեկավար Նիկոլ Փաշինյանը:

Սրանից ավելի քան 100 տարի առաջ նույն հանցավոր միամտությամբ ու անհեռատեսությամբ՝ օսմանահպատակ շատ հայեր 1908 թ.՝ երիտթուրքերի հեղափոխությունից հետո, հրճվանքով ու խանդավառությամբ բացականչում էին. *«Հիմա ազա՛տ ենք, մեզ ազատ ենք զգում, քայլ ենք անում ու քայլում ենք, երգում ենք ու երգում, և մեր սրտերն անհոգորեն շնչում են ազատ լեռների ազատ օդը»* (Ս. Սարհադյան, Կյանքիս հուշերից, Երևան, 2007, էջ 32):

Հետևանքը... Ահա՛ հետևանքը: Մենք կանգնած ենք հետևանքի առջև: Կանգնած ենք Օսմանյան կայսրությունում ցեղասպանված մեկ ու կես միլիոնից ավելի հայերի հիշատակը խորհրդանշող նահատակաց հուշարձանի առջև: Այսօր Հայոց ցեղասպանության 109-րդ տարելիցն է: Տասնյակ տարիներ մեր ժողովուրդը մորմոքացող սրտով, չսպիացող վերքերով, գլխահակ շարժվում է դեպի նահատակաց հուշարձան, մտովի զրուցում իր նահատակ և կամ հրաշքով մազապուրծ հայրենակիցների ու նախնիների հետ: Հազարավոր օրեր ու հազարավոր գիշերներ հարց ենք տալիս ինքներս մեզ՝ ինչո՞ւ արժանացանք այս դառը ճակատագրին, ինչո՞ւ Աստված լքեց մեզ:

Եվ հիմա, ժողովո՛ւրդ, վերստին հարցնում եմ ձեզ և հարցնում եմ մեզ՝ ինչո՞ւ եղավ ցեղասպանությունը, ինչո՞ւ ազգովի կոտորվեցինք ու դարձանք զոհը ոճրագործության:

Շատերը կասեն. «Աշխարհն էր մեղավոր, այսօրվա լեզվով՝ միջազգային հանրությունը, որն իր լռությամբ նվիրագործեց ոճրագործությունները ու կոտորածները»:

➥ էջ 6

# Տավուշը՝ հանուն Հայաստանի

*«Բոլոր նրանց եմ դիմում, ովքեր ասում են՝ քաղաքականությամբ ենք զբաղվում: Ճի՛շտ ենք անում: Ձեզ համար ենք զբաղվում, եթե զբաղվում ենք, որ ձեզ ազատենք մեղքից, ստրկությունից, գերությունից, կեղծիքից, ստից, որ մարդու պես ապրեք, հավատարմության մեջ ապրեք, որ ձեզ համար հայրենիքը չլինի ձեր գերեզմանի քարի մի կտորը, այլ ձեր մեծ ինքնության, վերելքի, սխրանքի ճանապարհը....»*: Սա Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ արք. Գալստանյանի հակադարձումն է բոլոր այն սին քննադատություններին, թե Եկեղեցին քաղաքականությամբ է զբաղվում: Սրբազանն այս մասին հայտարարել էր ավելի վաղ, երբ Տավուշում իրավիճակը դեռ չէր սրվել:

Այս օրերին, երբ ժողովրդի ցասման ալիքն ավելի է ուժգնանում, Բագրատ սրբազանի դեմ արշավը նույնպես թափ է առնում: Ակներև է, որ այդ սին ու անհեթեթ մեղադրանքների, էժանագին որակումների նպատակը սրբազան հոր կերպարը վարկաբեկելն է, նրան ամեն կերպ հեղինակազրկելը՝ պայքարի առաջնորդությունը ձախողելու համար: Սակայն չպետք է մոռանալ, որ տվյալ «լրատվամիջոցները» նրանք են, ովքեր վերջին տարիներին իրենց «մեծ լուման են ներդրել» Հայ Առաքելական Եկեղեցու և Ամենայն Հայոց Կաթողիկոսի դեմ արշավում: Եվ մանկամտություն կլիներ հավատալ, որ հիմա միանգամից դարձի են եկել՝ դառնալով Եկեղեցու և Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտպաններ:



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հանդես եկավ հայտարարությամբ՝ հաջակցություն Բագրատ սրբազանի՝ հորդորելով դադարեցնել անվայել և պախարակելի գործելաոճը Տավուշի թեմի առաջնորդի նկատմամբ, որը, ինչպես ասված է հաղորդագրության մեջ, *«հանդես է գալիս հայրենիքի անվտանգության և իր թեմի հավատավոր զավակների իրավունքների պաշտպանության մտահոգությամբ»*:

Մեր ազգի ու պետականության գոյության ճակատագրական այս պահին ժողովուրդն իր կորցրած հույսն ու հավատը սկսել է վերագտնել՝ գիտակցելով, որ Եկեղեցին է ազգային այն եզակի կառույցը, որի առաջնորդությամբ հնարավոր կլինի հաղթահարել անհնարինը և փրկել հայրենիքը: Բագրատ սրբազանը սեփական օրինակով է դիմադրության դասեր տալիս ժողովրդին՝ իր անվեհեր, ողջախոհ, ուղիղ դիրքավորմամբ վերհանելով պաշտոնական սուտն ու կեղծիքը, որով բթացնում են ժողովրդին և ազգային ընթացքն առաջնորդում անկումից անկում, կորուստներից կորուստ:

*«Մեր սիրտը ցավում է, բայց պետք է գործի միտքը: Սա ճշմարտության և ստի պայքար է: Մինչև հիմա սուտը հաղթում է: Մենք պետք է միասին այնպես անենք, որ ճշմարտությո՛ւնը հաղթի և վերջնակա՛ն հաղթի: Երկրի ղեկավարը սեփական ժողովրդին մատնել է տեռորի: Ժողովո՛ւրդ, չի՛ վերջացել ոչ մի բան.... Սա լինելու է մեր հաղթանակի սկիզբը»*,— հայտարարել է Բագրատ սրբազանը:

Տավուշի թեմի առաջնորդը քանի տարի է՝ իր բաժին պայքարն է մղում, իսկ պայքարի տավուշյան փուլը մեկնարկվեց այն պահից, երբ երկրի վարչապետը մեկնեց Տավուշ, ժողովրդին ահաբեկեց պատերազմով ու պարտությամբ՝ փորձելով համոզել, որ այլ ելք չկա՝ բացի պահանջվող տարածքները թշնամուն հանձնելուց: Վարչապետն իր զիջողական քաղաքականությունն արդարացրեց անհիմն պնդումով. իբր դրանք ադրբեջանական տարածքներ են և ոչ հայկական: Իշխանությունը, եթե այսպես շարունակվի, Ադրբեջանի հերթական պահանջով Սյունիքը, Սևանը, անգամ Երևանը պատրաստ կլինի հանձնել՝ դրանց հայկականությունը ևս ուրանալով:

Հատկանշական է, որ նոյեմբերի 9-ի հայտարարության նախնական տարբերակում եղել է հիշատակում Տավուշի տարածքների հանձնման վերաբերյալ: Հետագայում վերջնական տարբերակում այդ հատվածը դուրս է բերվել: Այնուհետև Ոսկեպարում ռուսական բազա է կառուցվել: Հարց է առաջանում՝ բանավոր պայմանավորվածությո՞ւն էր ձեռք բերվել՝ դա թողնել հետագային, թե՞ Հայաստանի կառավարությունն այնքան անհիմնատ և անզոր է արտաքին քաղաքական դաշտում, որ տարեցտարի նոր կորուստներ ու ողբերգություններ է բերում մեր երկրին: Պետք է հիշեցնենք, որ 2021 թ. նախընտրական քարոզարշավում Նիկոլ Փաշինյանը վստահեցրել էր, որ, իր ձևակերպմամբ, ձեռքերը կկտրի, բայց Տավուշի տվյալ գյուղերը հանձնելու փաստաթուղթ չի ստորագրի:

Մի քանի օրում ձևավորվեց «Տավուշը հանուն հայրենիքի» շարժումը, որի առաջնորդներից է Բագրատ սրբազանը: Քաղաքացիական այս նախաձեռնությունը տարածեց հայտարարություն՝ անհամաձայնություն հայտնելով միակողմանի զիջումների պարտվողական տրամադրությանը. *«Սա միայն Տավուշ աշխարհի կամ տավուշցու հարցը չէ, սա ամբողջ հայ ժողովրդի և Հայոց պետականության խնդիրն է»*,— նշված է հայտարարության մեջ:

Եղավ պահ, երբ ժողովրդին թվաց՝ հաջողվել է կասեցնել հայրենական հողերը հանձնելու հակասահմանադրական, ապազգային գործընթացը: Սակայն կրկին Տավուշ մեկնեց Ն. Փաշինյանը՝ փորձելով ապակողմնորոշել ժողովրդին, իսկ ապրիլի 19-ին հրապարակվեցին քարտեզներ, և վարչապետի գրասենյակից հայտարարեցին, որ պաշտոնապես սկսվում է հայ-ադրբեջանական սահմանազատման գործընթացը. *«Առաջին անգամ մեր երկրների միջև՝ չորս գյուղերի հատվածում, գոյություն կունենա սահմանազատված պետական սահման: Մինչև մայիսի 15-ը գեոդեզիական չափումներով պետք է կազմվի սահմանի նկարագրություն»*,— հայտնել է վարչապետի աշխատակազմը՝ ընդգծելով, որ երկուսուկես գյուղ Ադրբեջանին հանձնելու դիմաց Հայաստանն ստանալու է անվտանգային ռիսկերի նվազեցում: Եվ սա հայտարարում է նույն Փաշինյանի աշխատակազմը, որն ընդամենը մի քանի օր առաջ տավուշցիներին ոչ մի երաշխիք չէր տվել, որ անգամ գյուղերը հանձնելու դեպքում Ադրբեջանը նոր պահանջներ չի ներկայացնի կամ կդադարեցնի նկրտումները Հայաստանի նկատմամբ:

Տավուշում սկսվեցին չափագրման ու ականազերծման աշխատանքներ, որոնք առաջացրին տեղի բնակչության վրդովմունքը: Այժմ մարդիկ փորձում են խոչընդոտել, կասեցնել Հայաստանի ապագայի համար խիստ վտանգավոր գործընթացը: Կազմակերպվում են բողոքի ակցիաներ, ձևավորվում են պայքարի մեծ ու փոքր օջախներ:

Սահմանազատման քողի ներքո իրականացվող այդ գործընթացներն անօրինական են: Երկու երկրների միջև սահմանը որոշելու գործընթացը պետք է տեղի ունենա մի քանի փուլով. նախ՝ քարտեզի սահմանում, ապա սահմանազատում (քարտեզի վրա սահմանի սահմանում) և սահմանագծում (տեղում սահմանի սահմանում):

Պաշտոնական տեղեկության համաձայն՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև պետական սահմանի սահմանազատման հարցերով պետական հանձնաժողովների կանոնակարգի նախագծի համաձայնեցման շուրջ աշխատանքներն ավարտին կհասցվեն մինչև 2024-ի հուլիս 1-ը, որից հետո կմեկնարկի դրա ներպետական համաձայնեցման ու հաստատման գործընթացը: ➥ էջ 6

# Տ. Արշակ արք. Խաչատրյանի խոսքը՝ Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակների հիշատակության օրվա նախօրեին

➥ էջ 5

Ուրիշները կպնդեն, թե ցեղասպանության պատճառը թուրքերի գենետիկ դաժանությունն էր ու արյունարբությունը: Այլոց համար ցեղասպանության պատճառը հինավուրց ու մշակութաստեղծ ժողովրդի հանդեպ քոչվորների բնական նախանձն էր:

«Մեզ կոտորեցին, որովհետև մենք չունեինք զենք, չունեինք պետություն»,– սա էլ կլսենք՝ որպես պատճառ ցեղասպանության: Հիմա վերստին դիմում եմ ձեզ, ժողովուրդ, ինչո՞ւ ցեղասպանվեցինք, ինչո՞ւ թուրքական յաթաղանը հասավ մեր պարանոցին, ինչո՞ւ հեղվեց անմեղ մարդկանց արյունը, և ցիրուցան դարձավ մեր ժողովրդը:

Պատասխանս մեկն է. կոտորվեցինք, որովհետև մեզնից առավել ուրիշին սիրեցինք, ցեղասպանվեցինք, որովհետև մեզնից առավել դյուրահավատորեն ուրիշին վստահեցինք, և անմտորեն՝ մեզնից առավել ուրիշին նվիրվեցինք: Առավել հավատացինք թշնամու բարեգթությանը, քան մեր քաջությանը, առավել ապավինեցինք թուրքական բարյացակամությանն ու մեծահոգությանը, քան մեր ազգային արժանապատվությանն ու ինքնապաշտպանության բնական ձգտումին:

Այսօր պատմությունը կրկնվում է...

Որպես Ադրբեջան վերածնված նույն թյուրքական ցեղախումբը՝ Թուրքիայի իր եղբայրակիցների հետ, շարունակում է սպառնալիք ու թշնամի համարել Հայաստանին և ողջ հայությանը: Վերջին տարիների ողբերգական իրադարձությունները ցավալիորեն փաստեցին, որ հայության հանդեպ գենետիկ թշնամանքը որևէ փոփոխություն չի կրել թուրքի հավաքական գիտակցության մեջ:

Արցախի ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանական գործողությունները, Արցախի բռնազավթումն ու հայաթափումը, գերեվարված հայորդիների նկատմամբ կիրառվող խոշտանգումները, հայկական հոգևոր, պատմամշակութային արժեքների հետևողական ոչնչացման ու յուրացման դեպքերը, Հայաստանի ինքնիշխան տարածքների նկատմամբ ոտնձգություններն ու կեղծ պահանջատիրությունը, ադրբեջանական պետական քարոզչամիջոցներով Հայաստանի ու հայության դեմ ատելության ու թշնամանքի մասշտաբային տարածումը՝ խոսուն վկայություններն են այն բանի, որ, այո՛, հայության ոչնչացումը շարունակում է մնալ թուրքական օրակարգի առաջնային հարցերից մեկը:

Այս ողբերգական իրականության և գոյաբանական սպառնալիքի առջև ուղղակի զավեշտական, չասելու համար՝ դավաճանական է թվում այն ինքնամոռաց, բայց նույնքան ինքնահավան մոլուցքը, որով Հայաստանի իշխանությունները և նրանց ձայնակցող հասարակական, քաղաքական, քաղաքացիական ուժերն ու հոսանքները լծվել են թուրք-ադրբեջանական տանդեմի հետ «խաղաղության դարաշրջան» կամ «խաղաղության խաչմերուկ» կերտելու ճարտարապետության իրագործմանը:

Ժողովո՛ւրդ, կրկին հարց ունեմ ձեզ՝ հնարավո՞ր է արդյոք խաղաղության դաշինք ստեղծել դահճի ու զոհի միջև, հնարավո՞ր է համերաշխություն նրա հետ, ով փորձում է ժխտել քո գոյությունը, ով վիճարկում է քո ապրելու իրավունքը: Իհարկե, ո՛չ և բյուր անգամ ո՛չ: Հայատյաց այս ուժերի հետ հայության համակեցությունը հնարավոր է միայն մի դեպքում. դա այն դեպքն է, երբ կհրաժարվենք մեր ինքնությունից, երբ կհրաժարվենք մեր արժանապատվությունից, ապագայի մեր իղձերից ու տեսիլքներից ու պատմական մեր հիշողությունից, և, վերջապես, կհրաժարվենք նույն Ինքն Աստծուց:

Եվ սա՞ է, որ ուզում ենք մենք: Սա՞ է, որ ուզում էին ցեղասպանության նահատակները: Կրկին ո՛չ և բյուր անգամ ո՛չ:

Ինչո՞ւ Հայոց Եկեղեցին սրբադասեց ցեղասպանության զոհերին: Սրբադասեց, որովհետև նրանք նախընտրեցին մեռնել, քան ուրանալ Աստծուն և սեփական ինքնությունը: Վարդանանց դյուցազներգության ներբողագիր Եղիշե պատմիչը նահատակների ոգին ու քաջությունը նկարագրելիս վկայակոչում է նրանց խոսքերը. *«Նախընտրեցինք աստվածպաշտությամբ մեռնել, քան թե ուրացությամբ ապրել»* (Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, աշխարհաբար թարգմ. և ծանոթ.՝ Երվանդ Տեր-Մինասյանի, Երևան, 1994, էջ 96): Այս ոգեղինացած խոսքերով նահատակվեցին նաև Հայոց ցեղասպանության զոհերը:

Եվ այսօր մենք նույն իրականության առջև ենք. մեզ առաջարկվում է ուրացությամբ ապրելու ճանապարհը, դահիճների հետ համակեցության մեջ ապրելու մոլորությունը: Եվ դա արվում է ոչ այլ կերպ, քան հենց այսօրվա մեր երկրի ղեկավարների համոզված «առաջնորդությամբ»:

Սրբազան Արարատը մոռացության տալու համար՝ մենամարտի է հանվում և հակադրվում Արագածի հետ, պատմական Հայաստանը փորձ է արվում թաղել կարծեցյալ «իրական Հայաստանի» բավիղներում, Նժդեհը մերժվում է՝ որպես ազգայնամոլ, Վարդանն ու Վասակը փոխվում են դերերով, և ինչպես կասեր Շիրազը, «վասակները՝ գահի վրա, վարդանները՝ մահի»: Հայ Եկեղեցին դիտարկվում է որպես մրցակից, եկեղեցականները՝ սպառնալիք պետության համար: Դպրոցից դուրս է բերվում «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկան, հենց հանրակրթության շրջանակներում եղծվում ու խեղաթյուրվում է «Հայոց պատմությունը»: Հող հանձնողները դառնում են հայրենասեր, իսկ հողի համար կռվողները՝ գործակալներ, ամուսինները դառնում են զուգընկերներ, իսկ զուգընկերները՝ միգուցե նաև նույնասեռ անձինք:

Ահա այսպես է այսօր թշնամական օրակարգին «հակազդում» ցեղասպանություն վերապրած ժողովրդի իշխանությունը: Ցեղասպանությունից 109 տարի հետո մեր ժողովուրդն ստանում է սեփական իշխանություններից այսպիսի դեղատոմս՝ մոռանալ անցյալը, հրաժարվել ցավալի հիշողություններից, մոռանալ այն ամենը, ինչը կխանգարի քիրվայություն անել և բարիդրացիության մեջ ապրել ու առևտուր անել սեփական դահճի հետ:

Մի՞թե սա այլ բան է, քան պղծումը ցեղասպանության զոհերի հիշատակի: Մի՞թե սա մեկնարկն ու նախերգանքը չէ մի նոր ցեղասպանության: Կասկած չունեմ, որ անցյալից հրաժարվելը, թշնամու բարեգթությանը հանձնվելը ինքնին նոր ցեղասպանություն է:

Եվ դրա համար՝

- ով փորձում է ջնջել կամ կասկածի տակ առնել Հայոց ցեղասպանության իսկությունը, նզովյալ պիտի լինի սերնդեսերունդ,
- ով փորձում է ոչնչացնել պատմական մեր հիշողությունը, անիծյալ պիտի լինեն նրա ու նրա ընտանիքի անունն ու հիշատակը հավիտենապես,
- ով պայքարում է Եկեղեցու դեմ, հավիտենական դատապարտության ու ամոթի խարանով պիտի հիշվի պատմության մեջ,
- ով խարխլում է հայոց ընտանիքի հիմքերը, զրկված պիտի մնա ընտանեկան հարկից ու ընտանեկան ջերմությունից,
- ով հրաժարվում է հայրենի հողերից, անիծյալ ու աստանդական պիտի դառնա եղբայրասպան Կայենի նման:

Սիրելի՛ ժողովուրդ, այսօր՝ ցեղասպանության տարելիցի նախօրյակին, ջահերի լույսով դուք պատռեցիք խավարը և առատացրիք լույսը հայրենական կյանքի: Այդ լույսով մենք ցրել ենք ժամանակի մշուշներն ու մռայլը, հաղթահարել ենք անհաղթահարելին, վերապրել ենք անվերապրելին, և այսօր մենք ո՛չ թե ուրացությամբ պետք է մեռնենք, այլ աստվածպաշտությամբ պիտի ապրենք, պիտի ապրենք՝ ջահերի լույսը մեր գլխավերևում պահած, մեր ճանապարհի խավարը ցրելով և Տիրոջն ուղղված աղոթքը մեր շուրթերին.

*«Լուսովդ Քո, Քրիստոս, ամենեքեան լուսաւորեցաք, եւ ի սուրբ խաչ Քո, փրկի՛չ, հաւատացեալքս ապաւինեցաք: Լուր մեզ, Աստուածդ փրկիչ մեր. տուր մեզ զխաղաղութիւն Քո, եւ արա առ մեզ զողորմութիւն Քո, մարդասէր Տէր. ամէն»* (Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2016, էջ 265–266):

**Ապրիլի 23, 2024 թ., Երևան**

# Տավուշը՝ հանուն Հայաստանի

➥ էջ 5

Տարրական հարց է ծագում՝ եթե դեռ սահմանազատման փաստաթուղթը չի հաստատվել, և առնվազն մինչև աշուն հանձնաժողովները չունեն կանոնակարգ, հետևաբար՝ նաև որոշում կայացնելու իրավական գործառույթ, ապա ինչպե՞ս և ո՞վ է լիազորել Փաշինյանին՝ բանավոր պայմանավորվածությամբ որոշելու, թե Հայաստան–Ադրբեջան սահմանը որտեղով անցնի: Տավուշի այդ տարածքները ՀՀ ինքնիշխան իրավազորության ներքո են գտնվում, ուստի դրանց ցանկացած փոփոխություն (փոխանցում այլ պետության) համարվում է հանցագործություն, քանի որ ՀՀ Սահմանադրության 205 հոդվածի առաջին կետում հստակ նշվում է. *«Հայաստանի Հանրապետության տարածքի որևէ փոփոխությանը վերաբերող հարցերը լուծվում են բացառապես հանրաքվեի միջոցով»*:

«Հստակ ասում եմ՝ սա խաբեությամբ արված գործընթաց է: Երկուշաբթի օրը եկել է Կիրանց, և 4 օրում քարտեզ են հրապարակել, գրել են՝ ինչի մասին է: Սա նշանակում է, որ նախապես հստակ պատրաստված ծրագիրը դրված էր»,– այսպիսի դիրքորոշում է հայտնել Բագրատ սրբազանը: Փաշինյանը, սակայն, այն համարում է մեծ ձեռքբերում, իսկ մերձիշխանական արբանյակները մեր այդ ռազմավարական նշանակության տարածքների կորուստն անամոթաբար որակում են որպես արժանապատիվ կապիտուլյացիա:



*Ս. Աստվածածին եկեղեցի, գ. Ոսկեպար, 7-րդ դար*

Գիտակցելով իրողությունը, որ սա Տավուշի հարցը չէ միայն, այլև հայոց պետականության, Բագրատ սրբազանն այլևս հստակ ջրբաժան է սահմանում. *«Էս երկրում կամ մենք պետք է ապրենք, կամ իրենք. պետք է ի վերջո հեռանա»*: Նա իհարկե միակ հոգևորականը չէ, որն այս օրերին բաց ճակատով, անուններ, հստակ հանրային դիրքորոշում է հայտնում մեր երկրում տիրող քաոսային իրավիճակի և աղետաբեր ընթացքի մասին: Օրինակ՝ Շիրակի թեմի առաջնորդ Տեր Միքայել արք. Աջապահյանը նույնպես երկար ժամանակ պայքարում է Փաշինյանի վարչախմբի հեռացման համար. *«Եթե ուզում ենք, որ մեր երկիրը մնա հայկական, այս շարժումը պետք է ընդգրկի ամբողջ Հայաստանը: Այս ապազգային իշխանությունը պետք է հեռանա»*:

Բացառիկ էր ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդում, լրագրողների ճեպազրույցին ի պատասխան, Ամենայն Հայոց Վեհափառի հայրապետական հորդորը երկրի իշխանություններին. *«Արիությանը վախկոտություն մի՛ խառնեք»*:

Իր բովանդակությամբ աննախադեպ էր նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տեր Արշակ արք. Խաչատրյանի ուղերձն ապրիլի 23-ին՝ *«Զա՛րկ, երբ քեզ հալածում են»* նշանաբանով համազգային ջահերթի ժամանակ. *«Ով փորձում է ջնջել կամ կասկածի տակ առնել Հայոց ցեղասպանության իսկությունը, նզովյալ պիտի լինի սերնդեսերունդ: Ով փորձում է ջնջել պատմական մեր հիշողությունը, անիծյալ պիտի լինեն նրա ու նրա ընտանիքի անունն ու հիշատակը հավիտենապես.... Ով հրաժարվում է հայրենի հողերից, անիծյալ ու աստանդական պիտի դառնա եղբայրասպան Կայենի նման»*:

Երբ կառավարությունը հրաժարվում է կատարել օրենքով սահմանված պարտականությունները՝ պաշտպանել երկրի տարածքային ամբողջականությունն ու սեփական ժողովրդի անվտանգությունը, և չի շարժվում իր իսկ ներկայացրած ծրագրով, ապա այն կորցնում է իր օրինականությունը: Երիցս ճշմարիտ է Բագրատ սրբազանը՝ իշխանություն չկա, կառավարություն չկա մեր երկրում. իրենց որոշումների պատճառով ժողովուրդը տառապանքի մեջ է....

Ժողովուրդը հայրենիք և արժանապատվություն պահելու գիտակցության վերարթնացումով ոտքի է ելել, զենք է պահանջում, պատրաստ է գնալու խրամատ՝ պաշտպանելու իր հողը, իսկ երկրի ղեկավարներն ամեն կերպ փորձում են զրոյացնել ազգի դիմադրողականությունը: Բագրատ սրբազանը լավագույն կերպով է բնութագրում գործող իշխանությանը. *«Բախումներ հրահրողներն էլ եք դուք, պատերազմ բերած մարդիկ էլ եք դուք, զոհերի պատճառն էլ եք դուք: Ի վերջո, հասկացեք, որ դուք եք իշխանությունը: Ախր, մենք չենք կարող անընդհատ ասել, որ դուք իշխանություն եք, երբ դուք իշխանություն չեք բնույթով, ապրումներով, վերաբերմունքով և գիտակցությամբ»*:

Տավուշի թեմի առաջնորդն ընդգծում է՝ մեր բարձրագույն արժեքը, գիտակցությունը և պայքարի ուղին ճշմարտության հաստատումն է. *«Ես հավատում եմ, որ հոգևոր Հայաստանը հաղթելու է նոր Հայաստանին, իրական Հայաստանը հաղթելու է կեղծ Հայաստանին, տաճարը հաղթելու է փողոցին, ոգին հաղթելու է դուխին, հաշտությունը և սերը հաղթելու են ատելությանն ու թշնամանքին, և եռագույնը հաղթելու է սև ու սպիտակին»*:

**Մեղրի ՂՈՒԿԱՍՅԱՆ**
**լրագրող**

# ՈՂԲԱՄ ՄԵՌԵԼՈՑ, ԲԵԿԱՆԵՄ ԾԱՆԹԵՐ, ԿՈՉԵՄ ԱՊՐՈՂԱՑ

## *Հայոց ցեղասպանության թուրքական քաղաքականության իրագործման փուլերը, մեթոդներն ու հետևանքները*

Առաջին աշխարհամարտն սկսվելուն պես թուրքական իշխանություններն անցան հայերի ցեղասպանության՝ նախապես ծրագրված հանցավոր քաղաքականության իրականացմանը: Հայերի զանգվածային բնաջնջումը դյուրացնելու նպատակով, զորակոչի պատրվակով, մեկուսացվեց, ապա ոչնչացվեց հայ տղամարդկանց մեծ մասը: Սկզբնական շրջանում օսմանյան բանակ զորակոչվեց 18–45 տարեկան ավելի քան 60 հազար հայ: Զինաթափված հայ զինվորներից կազմում են բանվորական գումարտակներ՝ ստիպելով ծանր, անմարդկային պայմաններում բեռներ տեղափոխել, ճանապարհներ և կամուրջներ կառուցել, խրամատներ փորել և այլն, իսկ այնուհետև սպաների հրամանով զինվորներն և զինվորական ժանդարմները հայ տղամարդկանց 80–100 մարդուց բաղկացած խմբերով հեռացնում էին խուլ վայրեր և գնդակահարում:

Ցեղասպանական քաղաքականության առաջին փուլում հայ տղամարդկանց օսմանյան բանակ զորակոչելով ու ոչնչացնելով՝ երիտթուրքական իշխանություններն այդպիսով փորձում էին հայերին զրկել ինքնապաշտպանվելու ուժից ու հնարավորությունից, որպեսզի ավելի հեշտությամբ իրականացնեն հայկական բնակավայրերում անպաշտպան մնացած բնակչության տեղահանությունն ու բնաջնջումը: Պետք է նշել, որ հայերին, այդուհանդերձ, հաջողվեց դիմել ինքնապաշտպանության այն բնակավայրերում, որոնց բնակչությունը, կանխազգալով հայ տղամարդկանց օսմանյան բանակ տանելու՝ իշխանությունների իրական նպատակների մասին, հրաժարվեց զորակոչվել:

Հաջորդ փուլում երիտթուրքական իշխանություններն սկսում են հայ հասարակական, քաղաքական և կրոնական գործիչների ձերբակալությունները: 1915 թ. ապրիլի 23–24-ին Կ. Պոլսում երևելի հայերին ձերբակալելուց և Այաշ ու Չանքիրի աքսորելուց հետո հրահանգվեց ոչնչացնել նրանց աքսորի ճանապարհին: Ապրիլի 24-ին և հաջորդ մի քանի օրերին Կ. Պոլսում և հայաբնակ այլ բնակավայրերում, վաղօրոք կազմված ցուցակների համաձայն, ոստիկանությունը ձերբակալեց 800-ից ավելի, իսկ թուրքական աղբյուրի համաձայն՝ 2345 երևելի հայերի: Նրանց թվում էին օսմանյան խորհրդարանի պատգամավորներ Գրիգոր Զոհրապը, Վարդգես Սերենկյուլյանը, Վռամյանը, բանաստեղծներ Սիամանթոն, Դանիել Վարուժանը, Ռուբեն Սևակը, Արտաշես Հարությունյանը, գրողներ, հրապարակախոսներ և լրագրողներ Երուխանը (Երվանդ Սրմաքեշխանլյան), Ռուբեն Զարդարյանը, Սմբատ Բյուրատը, Թլկատինցին, Գեղամ Բարսեղյանը, երգահան Կոմիտասը, դերասան Ենովք Շահենը, նկարիչ Հրանտ Աստվածատրյանը, բժիշկ Նազարեթ Տաղավարյանը, գիտնականներ Տիրան Քելեքյանը, Գագիկ Օզանյանը և շատ ու շատ ուրիշներ: Մայրաքաղաքից աքսորված հայ մտավորականների մեծամասնությունը դաժանորեն սպանվեց տարագրման ճանապարհին: Հայ մտավորականներին ձերբակալելու ու ոչնչացնելու միջոցով երիտթուրքական իշխանությունները հայերին զրկեցին ազգային ընտրանուց՝ վախենալով, որ նրանք կարող էին ձախողել հայերին բնաջնջելու՝ կառավարության հանցավոր ծրագիրը:

Հայոց ցեղասպանության երրորդ փուլում նախատեսվում էր իրենց բնակավայրերից տեղահանել առաջնորդներից զրկված և անպաշտպան մնացած հայ բնակչությանը: Հայերի՝ ամբողջ կայսրությունում արդեն իսկ ընթացող զանգվածային տեղահանություններին ու կոտորածներին «օրինական» տեսք տալու նպատակով՝ ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի նախաձեռնությամբ երիտթուրքերի կառավարությունը 1915 թ. մայիսի 30-ին ընդունեց «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքը:

Հարազատ բնակավայրից մի քանի կիլոմետր հեռանալուց հետո հայերի մոտ եղած թանկարժեք իրերն ու դրամն անմիջապես կողոպտում էին քարավանն ուղեկցող ժանդարմները: Հայերի տների, խանութների, արհեստանոցների շարժական գույքն էլ նրանց հեռանալուց հետո թալանում էր տեղի մահմեդական բնակչությունը, իսկ անշարժ գույքը, որն իբրև ի պահ էր հանձնվում իշխանություններին, գործնականում բռնազավթում էր թուրքական պետությունը: Տեղահանված հայերի տներում իշխանություններն անմիջապես բնակեցնում էին մահմեդականների, ինչը վկայում է այն մասին, որ հայ գաղթականների ճակատագիրն արդեն իսկ կանխորոշված էր:

Հայ աքսորականների քարավանների տեղահանության երթուղիներն ընտրված էին այնպես, որ նրանք անցնեին թշնամաբար տրամադրված մահմեդականներով բնակեցված բնակավայրերով: Հենց այդ բնակավայրերի մոտ էլ գիշերային կանգառներ էին արվում, ինչից հետո մահմեդականներին հարձակման ազդանշան էր տրվում, որոնք հարձակվում էին հայերի վրա՝ նրանց ենթարկելով սպանդի, բռնությունների ու թալանի: Հայերի քարավաններն ուղեկցող և նրանց անվտանգությունն իբր թե ապահովող ժանդարմները լավագույն դեպքում հանգիստ հետևում էին, իսկ երբեմն էլ միանում էին հարձակվողներին, քանզի նրանց առջև իրականում խնդիր էր դրված ոչ թե պաշտպանել, այլ ոչնչացնել տեղահանվողներին:

Թուրքական իշխանությունների համար խիստ անցանկալի էր հայերի «մահվան քարավանների» միմյանց հանդիպելու հնարավորությունը, ինչը կարող էր անկառավարելի դարձնել տեղահանության հետագա ընթացքը, այդ իսկ պատճառով նրանց տեղահանության երթուղիները երբեմն փոխվում էին: Կանգառներում և բաշխման ժամանակավոր կետերում կացարանների և սննդի բացակայությունը, բնակլիմայական դաժան պայմանները, ինչպես նաև համաճարակները հանգեցնում էին բռնի տեղահանվածների զանգվածային մահացությունների:

Զանգվածային տեղահանություններին ու կոտորածներին զուգահեռ ընթանում էր նաև հայերի մահմեդականացման գործընթացը: Հատկանշական է, որ երիտթուրքերը թույլ են տվել հայերին կրոնափոխվել հիմնականում այն վայրերում, որտեղ վերջիններիս տարրալուծումը մահմեդական մեծամասնության մեջ հնարավոր են համարել, իսկ մյուս դեպքերում հրաժարվել են կրոնափոխությունից և դիմել ֆիզիկական ոչնչացմանը: Ակնհայտ է, որ իսլամացումն անխուսափելիորեն հանգեցնում էր հայերի ձուլմանը և ազգային ինքնագիտակցության կորստին, ուստի այն ոչ թե բնաջնջման այլընտրանք, այլ դրան զուգահեռ Արևմտյան Հայաստանը հայաթափելու լրացուցիչ միջոց էր:

Եթե անգամ կրոնափոխված հայերին չէին տեղահանում, ապա նրանց թույլ չէին տալիս մնալ իրենց բնակավայրերում, այլ փոխադրում էին մահմեդականներով բնակեցված շրջաններ: Մահմեդական բնակավայրերում վերաբաշխված հայ բնակչությունը զրկված էր դպրոցներ բացելու հնարավորությունից, որպեսզի երեխաները հարկադրված հաճախեին թուրքական պետական դպրոցներ, ինչը վկայում էր կրոնափոխված հայերի նկատմամբ վարվող ձուլման քաղաքականության մասին:

Կրոնափոխության միջոցով հայերի տեղահանության հետաձգումը տեղական թուրք պաշտոնյաների շրջանում դարձել էր կաշառակերությամբ զբաղվելու միջոց, երբ ունևոր հայերից կաշառք ստանալով՝ մահմեդական էին դարձնում վերջիններիս՝ այդպիսով ընդամենը որոշ ժամանակով հետաձգում նրանց տեղահանությունը: Ակնհայտ է, սակայն, որ կաշառք տալու միջոցները սպառելուց կամ ներքին գործերի նախարարության ավելի խիստ պահանջից հետո անգամ ունևոր հայերը, ի վերջո, ենթարկվելու էին տեղահանության:

Մանկահասակ հայ աղջիկներն ու տղաները մահմեդականացվում էին, այնուհետև տեղավորվում մահմեդական որբանոցներում կամ բաշխվում մահմեդական ընտանիքների վրա, ինչն ամենևին չէր նշանակում, որ մանկահասակ հայ երեխաներն ընդհանրապես չէին ոչնչացվում: Հայ կանայք և մանկահասակ աղջիկները ենթարկվում էին սեռական բռնությունների, տարածված էր բարձրաստիճան պաշտոնյաներին հայ աղջիկներին որպես «նվեր» մատուցելը:

Տեղահանվող հայերի քարավանների կայանատեղիները ժանդարմների թողտվությամբ վերածվում էին երեխաների և հասուն աղջիկների ստրկության վաճառելու շուկաների՝ թույլատրելով նրանց գնել միայն մահմեդականներին: Հայ որբ երեխաների համար որբանոցներ բացելու գործով զբաղվում էր կրթության նախարարությունը, ինչը վկայում է այն մասին, որ հայերի բնաջնջման ու ձուլման ծրագրված քաղաքականությանն իրենց գործառույթների շրջանակներում մասնակցել են պետական բոլոր կառույցները:

Հայ որբերի ձուլման գործընթացը կազմակերպվել է՝ հաշվի առնելով երեխաների տարիքային խմբերը: Մահմեդական ընտանիքներում բաշխվել են տարիքով փոքր երեխաները, իսկ մյուսները տեղավորվել են թուրքական պետական որբանոցներում: Նման բաժանումը պայմանավորված էր այն բանով, որ մեծահասակ երեխաներն արդեն իսկ ունեին ձևավորված հայկական ինքնություն, և մահմեդական ընտանիքները հազիվ թե կարողանային հաղթահարել նրանց ձուլման գործընթացը: Արգելվում էր մահմեդականների հետ ամուսնացած հայ կանանց կամ որդեգրված հայ երեխաներին քաղաքներ և հատկապես մայրաքաղաք տեղափոխելը՝ մտավախություն ունենալով, որ այնտեղից նրանք կարող էին փախչել, ինչը կարող էր ձախողել ձուլման քաղաքականությունը:

Հայերի ցեղասպանության քաղաքականության կարևոր բաղադրիչներից էր նրանց անշարժ գույքի և ողջ ունեցվածքի բռնազավթումը, որն իրականացվում էր զանգվածային տեղահանություններին ու կոտորածներին զուգահեռ: «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքից հետո՝ 1915 թ. հունիսի 10-ին, թուրքական իշխանություններն ընդունեցին նաև «Լքյալ գույքի մասին» ժամանակավոր օրենքը, որի համաձայն՝ տեղահանված հայերի անշարժ ու շարժական գույքն իբրև թե ի պահ էր հանձնվում իշխանություններին և պետք է վերադարձվեր, երբ նրանք վերադառնային իրենց բնակավայրերը, սակայն քանի նրանց ճակատագիրն արդեն իսկ վճռված էր, ապա ակնհայտ է, որ այս օրենքով ընդամենն «օրինականացվում» էր հայերի ունեցվածքի զանգվածային բռնազավթման գործընթացը: Ստեղծվել էին «Լքյալ գույքի» հանձնաժողովներ, որոնք կեղծ աճուրդներ կազմակերպելով՝ հայերի անշարժ ու շարժական գույքը նվիրաբերում կամ չնչին գումարներով փոխանցում էին մահմեդականներին:

Մահմեդականների շրջանում հայ աղջիկներին կնության առնելու և հայ որբերին իրենց ընտանիքներ վերցնելու գործընթացը խրախուսելու համար «Լքյալ գույքի» հանձնաժողովների նախագահների միջոցով լուրեր էին տարածում, թե քանի որ կտակարարները մահացել են, ապա այրիացած հայ կանանց, որբացած աղջիկների և որբերի ժառանգությունը կփոխանցվի նրանց նոր ամուսիններին և որդեգրողներին: Սա չափազանց գործուն միջոց էր, ինչը մահմեդականների շրջանում մեծ իրարանցում առաջացրեց հայ ընտանիքների որբացած երեխաների և այրիացած կանանց ժառանգությանը տիրանալու հարցում:

Երիտթուրքական կառավարության հրամանի համաձայն՝ հայ տարագիրների «մահվան քարավանները» քշվում էին դեպի Միջագետքի և Սիրիայի՝ Ռաս-ուլ-Այնի, Դեյր էլ-Զորի, Մեսքենեի, Ինթիլիի, Ռաքքայի և համակենտրոնացման այլ ճամբարներ: Երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունն այս ճամբարներում պետք է ավարտեր բնությունը: Այս անապատները թուրքական իշխանությունները պատահական չէին ընտրել: Ականատեսների վկայությամբ՝ հրաշքով ողջ մնացած հայերն այստեղ դանդաղ և տանջալից մահանում էին շիկացած ավազուտներում՝ առանց սննդի և ջրի, համաճարակային հիվանդությունների պայմաններում: 1915 թ. աշնանից մինչև 1916 թ. ձմեռ 850 000 տեղահանված հայերից ավելի քան 300 000-ը մահացավ Սիրիայի և Միջագետքի ճանապարհներին կամ համակենտրոնացման ճամբարներում: Դեյր էլ-Զորի ճամբարից հետո հայ նահատակների քանակով երկրորդը Ռաս-ուլ-Այնի ճամբարն էր, որտեղ ոչնչացվեց մոտ 70 000 մարդ, երրորդը Մեսքենեն էր, որտեղ նահատակվեց շուրջ 55 000 հայ, հաջորդն Ինթիլին էր, որտեղ սպանվեց 40 000–50 000 հոգի: ➥ էջ 8

# Բռնազավթված հայրենիքի պահանջատիրությունը Հովհաննես Շիրազի պոեզիայում

*Հովհաննես Շիրազ — 110*

1940—1980-ական թթ. հայ պոեզիայում, որպես կորսված հայրենիքի գաղափարագեղագիտական խորհրդանիշ, տիրական է դառնում Արարատ լեռան գրական պատկերը: Արարատապաշտությունը՝ որպես ծրագրային դավանանք, խորհրդահայ բանարվեստում և առհասարակ ազգային գաղափարաբանության մեջ հռչակեց Հովհաննես Շիրազը: Ժամանակի ազգային կյանքում իր հայրենասիրական ծրագրային պոեզիայով Շիրազը բացառիկ երևույթ է, կորսված հայրենիքի վերածնունդն ազդարարող ոգեղեն ուժ: Նա ճեղքեց Արարատ տանող գրական ճանապարհի պաշտոնական ուղեփակոցները՝ տևական լռությունից հետո վերստին կամուրջ ձգելով առկա և կորուսյալ հայրենիքի ու հայրենազրկված սփյուռքի միջև:

Ազգային-հայրենասիրական բանաստեղծությունը ժամանակին բռնադատվում էր իշխող վարչակարգի կողմից: Հաղթահարելով պարտադրվող գաղափարական սահմանափակումները՝ Շիրազն ազատագրեց հայրենասիրական պոեզիայի ներքին տիրույթները, ոգի ներարկեց ազգային բեկված հոգեբանությանը, տվեց ազգային ինքնավստահություն՝ խորհրդային միապետության քաղաքական պայմաններում հնչեցնելով իր էրգրի օրինական ժառանգության պահանջատիրության արդար պոեզիան:

1960—1980-ական թթ. Շիրազն այլևս հոգևոր առաջնորդ ուժ էր, որ մի ամբողջ սերնդի մեջ դաստիարակել էր բռնազավթված հայրենիքի ազատագրման գաղափարապաշտությունը: 1937-ով խորհրդանշվող հայ ազգային հանճարի խորհրդային սպանդին հաջորդած գաղափարական սխեմատիզմի ու անկոնֆլիկտայնության համահարթիչ մթնոլորտում բացարձակ հնչեցնել կորուսյալ հայրենիքի ազատագրման գաղափարը՝ ոգու սխրանք էր: Շիրազը նշանավորեց ազգային գիտակցության վերելքի շրջափուլ՝ դառնալով Հայ դատի պահանջատերը գեղարվեստի միջոցով:

Պատմական հայրենիքի ազատագրման խանդավառ ոգին, որ Շիրազի հայրենապաշտ պոեզիայի դիմագիծն է, իր տեսակարար կշռով սերում է ազգային ոգու վիպասքից՝ «Սասնա ծռերից»: Գիրը խիզախ է, անկաշառ, զգացմունքը՝ տարերային, ներշնչանքը՝ բացարձակ: Բառն ու բանը ծուխ ու բոց է ժայթքում խորքից, ինչպես առասպելական եղեգան փողը: «Արարատի քուրմն» իր մեջ կրում է արևմտահայ բանաստեղծական վերջին հանճարի «ցեղին սիրտը» և ցեղի ուժը, «ցեղին ցավն» ու ցեղի կորովը.

**Ոչ ոք չի կարող երգս կաշառել,**
**Դեպի Մասիս է երթս աննահանջ...**

Շիրազի արարատապաշտությունը հզոր է և ջղուտ, Արարատին վերահասնելու գաղափարը՝ աներկբա: Բանաստեղծական ներշնչանքն անխառն է, երևակայությունը՝ անսանձ, զգացմունքը՝ միստիկ: Արարատի գաղափարանշումով Շիրազը բարձրացնում է բռնազավթված հարենիքի պահանջատիրությունը՝ կյանքի վերածնության սկզբունքով հավատալով նաև Արարատով սկզբնավորվող կորուսյալ հայրենիքի վերածնությանը.

**Դեռ մի կարոտ ունեմ անհագ՝**
**հասնեմ Անի ու նոր մեռնեմ,**
**Բանամ ճամփիս դռները փակ,**
**տեսնեմ Անին ու նոր մեռնեմ...**
**Վանա ծովի ու Վանի հետ ու Ղարսի հետ**
**ու Մասիսի՝**
**Իմ Սևանի լույսերի տակ զուգեմ Անին՝**
**օջախ վառեմ...**
**Բանտից հանեմ մեծ Հայաստանն՝ այս**
**ազատված փոքրիս խառնեմ,**
**Գրկելով հողն իմ բովանդակ՝**
**հայկեմ Անին ու նոր մեռնեմ...**
**Որպես ոսկի վաղվա գուշակ, որպես**
**Մասիսին իմ անուշակ,**
**Գլխին հայոց մի դրոշակ տեսնեմ Անին...**
**ու չմեռնեմ...**

Ցավի ու հրճվանքի հորձանուտներով, մտածությունների ու զգայությունների ալեկոծություններով Շիրազի մասիսապատումը, ըստ ամենայնի, բանաստեղծական եզակի երևույթ է, նորարարություն հայ գեղարվեստի համակարգում: Շիրազն անհատականանում է հայ հայրենասիրական պոեզիայի պատմական ընթացքի մեջ ոչ միայն հույզերի անմիջական հորձանքով, բնական ռիթմով, ժողովրդական կենսախոհությամբ ու պատկերավոր պարզությամբ, այլև գաղափարագեղագիտական հստակ ծրագրով: «Նախընտրեցի երգել ցեղին սիրտը, որին բախյունները կզգայի իմ մեջ.... իմ սեփական արյունիս խորը: Հայությունը կ՚ուլար և կմռնչեր իմ մեջս»,— գրում էր Դանիել Վարուժանը, և սա ոչ միայն բանաստեղծական սերունդների ընդհանուր հոգեզգացողություն է, հայ պոեզիայի ճակատագիր, այլև գեղարվեստական որոշակի ծրագիր.

**Շանթն է բեկվում ճակտիս վրա,**
**Մահ՝ չգիտեմ՝ կա՞, թե չկա,**
**Ելնում եմ ես ահերն ի վեր,**
**Ելնում եմ ես մահերն ի վեր,**
**Ահեր, մահեր, գահերն ի վեր:**
**Աչքերիս մեջ գարնան օրեր,**
**Ճամփես դեպի աստղերն անմեռ՝**
**Ինձ ելնելու քարեր կան դեռ,**
**Ինձ ելնելու սարեր կան դեռ,**
**Մահեր, սարեր, դարեր կան դեռ...**

Ամբողջ բանաստեղծությունը ազգային ոգու հարանորոգ ուժի արտահայտություն է, արարատաբաղձության և արարատապաշտության բարձրագույն չափանիշ: Ազգային կարոտացավն իր ահռելի կշռով Շիրազի պոեզիայում համանիշ է պատմական կորուստը հետ բերելու ներքին զորության. ➥ էջ 11

# Հայոց ցեղասպանության թուրքական քաղաքականության իրագործման փուլերը, մեթոդներն ու հետևանքները

➥ էջ 7

Համակենտրոնացման ճամբարներում հայերի ոչնչացման «բնական» արագությունը չէր գոհացնում երիտթուրքերին. նրանց հարկավոր էր մինչև պատերազմի վերջն ավարտին հասցնել իրենց հանցավոր քաղաքականությունը և անապատներում թաքցնել դրա հետքերը: Օսմանյան կառավարության հրամանով տեղի մահմեդական բնակչությունից կազմավորվեցին հրոսակախմբեր, որոնց վստահվեց նշված ճամբարներում դեռևս ողջ մնացած հայերի ոչնչացման գործը:

Թուրքական իշխանություններին, սակայն, ոչ բոլոր բնակավայրերում հաջողվեց անխափան իրագործել հայերին բնաջնջելու իրենց հրեշավոր ծրագիրը: Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ մի շարք վայրերում հայ բնակչությունը հերոսական դիմադրություն ցույց տվեց թուրք և քուրդ ջարդարարներին: Վանում, Մուսա լեռում, ինչպես նաև Շապին Գարահիսարում, Ֆըտընճագում, Ուրֆայում, Մուշ-Սասունում և այլ բնակավայրերում կազմակերպված ինքնապաշտպանական մարտերի շնորհիվ հաջողվեց որոշակիորեն ձախողել Արևմտյան Հայաստանի ու կայսրության հայաբնակ այդ տարածքների հայությանն իսպառ բնաջնջելու թուրքական իշխանությունների ծրագիրը: Նշված մարտերի շարքում Վանում և Մուսա լեռում անհավասար դիմադրական մարտերը փաստացի ավարտվեցին հայերի հաղթանակով:

Առաջին կազմակերպված ինքնապաշտպանական կռիվները տեղի ունեցան Վանի նահանգի հայկական բնակավայրերում: 1915 թ. ապրիլի 7-ից շուրջ մեկ ամիս Վանում կենտրոնացած հայ քաղաքական-կուսակցական գործիչներին, Արամ Մանուկյանի գլխավորությամբ, հաջողվեց կազմակերպված դիմադրություն ցույց տալ գերակշռող ուժեր ունեցող հակառակորդին մինչև մայիսի 6-ը, երբ թուրքերը նահանջեցին՝ տեղեկանալով, որ ռուսական զորքն ու հայ կամավորականները մոտենում են քաղաքին: Վանի 1915 թ. հերոսական ինքնապաշտպանությունը պսակվեց փառահեղ հաղթանակով՝ կոտորածից փրկելով բազմահազար վանեցիների:

1915 թ. օգոստոսի 7-ին սկսված Մուսա լեռան անհավասար հերոսամարտը տևեց մինչև սեպտեմբերի 10-ը, երբ ֆրանսիական ռազմանավերով տեղափոխեցին կանանց, երեխաներին և ծերերին, մինչդեռ տղամարդիկ շարունակեցին մնալ դիրքերում՝ ապահովելով նրանց անվտանգ տարհանումը: Ընդհանուր առմամբ փրկվեց 4058 սուետիահայ, որոնք տեղափոխվեցին Եգիպտոսի Պորտ Սաիդ բնակավայրը:

Առաջին աշխարհամարտի ավարտից և Օսմանյան կայսրության պարտության հետևանքով տրոհման գործընթացից հետո թվում էր, թե Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչները պատասխանատվության կենթարկվեն հայ ժողովրդի նկատմամբ կատարած ոճրագործության համար: Երիտթուրք պարագլուխների՝ երկրից հեռանալուց հետո թուրքական նոր իշխանություններն ստեղծեցին ռազմական դատարաններ, որոնք իբր պետք է պատասխանատվության ենթարկեին պատերազմի ընթացքում հանցագործություններ կատարած պաշտոնյաներին: Երկրից հեռացած՝ Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուները մահվան դատապարտվեցին հեռակա կարգով, իսկ ներկա գտնվող մեղադրյալների նկատմամբ հիմնականում կիրառվում էին բավական մեղմ վճիռներ: Արդարադատությունից խուսափած գլխավոր հանցագործներին պատասխանատվության ենթարկելու գործն իրականացվեց «Նեմեսիս» գործողության շրջանակում, որի ընթացքում հայ վրիժառուները հայտնաբերեցին Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներին և ի կատար ածեցին օրինական ուժի մեջ մտած մահվան վճիռները:

*Վանի հերոսամարտը*

Ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված վնասներն ու կորուստները պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ ա) հայրենազրկում, բ) մարդկային կորուստներ, գ) մշակութային ժառանգության կորուստ, դ) նյութական կորուստներ, ե) հոգեբանական բարդույթներ: Ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդի կրած կորուստները հաճախ նույնականացվում են այդ հանցագործության հետևանքների հետ, մինչդեռ, ի տարբերություն կորուստների, դրանց հետևանքներն անցյալում չեն մնացել: Հայ ժողովուրդն արդեն ավելի քան մեկ դար Հայաստանում և Սփյուռքում շարունակում է իր ուսերի վրա կրել Հայոց ցեղասպանությամբ իրեն հասցված կորուստների հետևանքների ծանր բեռը: Պատահական չէ, որ որոշ հետազոտողներ հակված են այն կարծիքին, որ քանի դեռ Թուրքիան չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը, և չեն հաղթահարվել այդ հանցագործության հետևանքները, գործ ունենք շարունակվող ցեղասպանության հետ:

*Նեմեսիս գործողության հայտնի վրիժառու Սողոմոն Թեհլերյանը, 1921*

Ամփոփելով նշենք, որ չնայած Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման ուղղությամբ կատարված հսկայական աշխատանքին՝ դեռևս բավականին շատ անելիքներ կան: Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղված աշխատանքները պետք է կատարվեն միասնաբար ու հետևողականորեն՝ ճիշտ օգտագործելով եղած միջոցները և հաշվենկատորեն օգտվելով միջազգային իրավական ու քաղաքական ընձեռված հնարավորություններից: Անշուշտ, ճանապարհը դյուրին չի լինելու, կան լուրջ խոչընդոտներ ու դժվարություններ, սակայն դրանք հաղթահարելի կլինեն, եթե մեր արդար դատը մինչև վերջ տանելու կամք և վճռականություն ունենանք:

**Արմեն ՄԱՐՈՒՔՅԱՆ**
**պ. գ. դ., պրոֆեսոր**
**ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի**
**Հայկական հարցի և Հայոց**
**ցեղասպանության պատմության բաժնի**
**վարիչ**

# *Հարցազրույց Մայր Աթոռում գործող Ռուբեն Սևակի թանգարանի տնօրեն Տ. Սևակ քհն. Սարիբեկյանի հետ*

«Ամբողջ Եվրոպայի մէջ, աշխարհի էն շքեղ կեդրոններէն մինչև ամենամութ ու խաւարին անկիւնները ես չեմ տեսեր ու չեմ ալ կրնար հաւատալ որ գտնուի տակաւին մէկ ուրիշ ազգ, որ ամէն օր ու ամէն վայրկեան ապրէր դերասանի ճշմարտապէս կեղծ ու գերեզմանօրէն ծիծաղելի այն կեանքը, որ դարերէ ի վեր մեր կեանքը եղաւ, մեր՝ ստրկացած թրքահայերուս կեանքը... Տառապիլ ու ստիպուած ըլլալ ամենաերջանիկ կերպարանք մը ցոյց տալու... Անպատուուիլ, բռնաբարուիլ, գետնաքարշ տապալիլ ու ստիպուած ըլլալ գոհութեան ջերմագին աղաղակներ բարձրացնելու... Ժպտի՛լ այնպիսի մէկ վայրկեանիդ, ուր արիւն արցունք պիտի պոռթկար աչերէդ... Մաղթանքի ճիչեր հանել կոկորդէդ այն բռնակալ ձեռքին համար որ զքեզ կը խեղդէ... Մեռնի՛լ —հոգեպէս մեռնիլ— ու ապրիլ ձևացնել. ահա դերասանական ահռելիօրէն կեղծ կեանքը, որ մերը եղաւ այնքա՜ն երկար տարիներ....»:

**Ռուբեն Սևակ,** ***8 օգոստոսի, 1908 թ., Պոլիս***

**—2013 թ. սեպտեմբերին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում բացվեց Ռուբեն Սևակի թանգարանը՝ եղեռնազոհ պոետի եղբորորդու՝ Հովհաննես Չիլինգիրյանի հովանավորությամբ և Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ: Տե՛ր Սևակ, ի՞նչ խորհուրդ է հղում Մայր Աթոռում Ռուբեն Սևակի թանգարանի հիմնումը:**

—Ռուբեն Սևակի թանգարանի ստեղծումը Մայր Աթոռում Հայոց ցեղասպանության միլիոնավոր նահատակների հիշատակի խնկարկման և հավերժացման խորհուրդն ունի, ինչպես Մայր Աթոռում դրանից առաջ Վազգեն Առաջինի կողմից կառուցված հուշարձանը: Բացի այդ, Հայոց Եկեղեցին մշտապես պայքարել և այսօր էլ պայքարում է ցեղասպանության միջազգային ճանաչման ու հատուցման համար, և թանգարանի հիմնումը միտված է նաև օտարազգի զբոսաշրջիկների միջոցով նպաստելու այդ գործընթացին:

Ռուբեն Սևակը չուրացավ իր հավատը, մահը գերադասեց կյանքից, որ ապրի հայկական ինքնությունը: Նա իր կերպարով խորհրդանշում է ցեղասպանության զոհ դարձած մեր ժողովրդին, որ քրիստոնյա նահատակի պսակը գերադասեց բռնի մահմեդականացումից: Թանգարանը բացվեց ընդառաջ և ի նշանավորումն Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի: Ամեն տարի հարյուրավոր այցելուներ ենք ունենում՝ հայ և օտարազգի, և նրանց ներկայացնում ենք 1915-ի ցեղասպանությունը՝ ի դեմս Ռուբեն Սևակի: Ռուբեն Սևակը բացառիկ կերպար է՝ բանաստեղծ, բժիշկ, նկարիչ, արևմտահայության հավաքական կերպար, որն իր միջոցով այցելուների առջև թանգարանում բացում է այն աշխարհը, որտեղ ապրել, արարել է արևմտահայությունը, և նրա ստեղծագործություններն այսօր էլ ուժ ու ոգի են տալիս:

**—Այո՛, Ռուբեն Սևակը Հայոց ցեղասպանության խորհրդանշական կերպարներից է: Նրա կյանքն ինքնին գեղարվեստական արժեք ունեցող ողբերգահերոսական մի վեպ է: Պատահական չէ, որ Սևակի մասին այդքան վեպեր են գրվել. Թորոս Թորանյան՝ «Իմ Ռուբեն Սևակը», Ալեքսանդր Թոփչյան՝ «Եվ անգամ մահից հետո», Անդրանիկ Ծառուկյան՝ «Սերը եղեռնի մեջ», Հ. Հակոբջանյան. «Սպիտակ էդելվեյսներ»....**

—Սևակը բացառիկներից էր, որ կարող էր փրկվել ցեղասպանության ժամանակ: 1915 թ. ապրիլի 24-ին, արդեն զորակոչված լինելով և թուրքական բանակում որպես բժիշկ ծառայության մեջ գտնվելով, ձերբակալվում և բանտարկվում է Պոլսի կենտրոնական բանտում, ապա աքսորվում Չանղըրը: Չանղըրըում թոքաբորբից բուժում է թուրք ավազակապետ Արաբաջի Իսմայի մահամերձ աղջկան: Աղջիկը սիրահարվում է Սևակին: Իսմայիլը նրան հորդորում է իսլամություն ընդունել և իր աղջկա հետ ամուսնանալ՝ փրկվելու սպասվող կոտորածներից, սակայն բժիշկը հրաժարվում է: Ընկերները հորդորում են գնալ այդ քայլին, առերես ուրանալ, բայց՝ անօգուտ: Սևակը մերժում է՝ գիտակցումով, որ քրիստոնեությունն ուրանալը նշանակում է ուրանալ հայ ինքնությունը: Շատերը կուզեին, որ Ռուբեն Սևակն ամուսնանար թուրքի հետ և փրկվեր, բայց եթե Ռուբեն Սևակն ուրանար իր ինքնությունը, այսօր նրա անունը դավաճանների մեջ պիտի հիշվեր՝ ազգուրաց, հավատափոխ հիշատակումներով: Նա նահատակ է և բացի նրանից, որ մերժեց քրիստոնեությունն ուրանալ, նաև գնաց և իր հետ բանտարկված հայությանը նույնը կոչ արեց, ինչպես Վարդան Մամիկոնյանը՝ Ավարայրից



առաջ: Եվ հորդորեց, որ, ինչպես Եղիշեն էր ասում 5-րդ դարում՝ քրիստոնեությունը մեր մաշկի գույնն է, աստվածուրացությամբ չփոխել տեսակը և մահը գերադասել:

Սևակի նահատակությունն այսօր էլ ինքնության արժևորման, ինքնաճանաչման օրինակ է՝ նաև հասկանալու համար, որ աշխարհում ոչինչ չի վերջանում, նույնիսկ մահը վերջ չէ, մահը նոր կյանքի սկիզբ է՝ հարության սկիզբը:

**—Ռուբեն Սևակը փրկության այլ տարբերակներ էլ ուներ. նա ապրում էր Եվրոպայում՝ Լոզանում, ուներ սիրած ընտանիք և աշխատանք, սակայն 1914-ին վերադարձավ Պոլիս, որտեղից կոտորածների բոթեր էին հասնում իրեն: Սևակը կարող էր չվերադառնալ, բայց գերադասեց հետ դառնալ և կիսել ժողովրդի խաչը, լինել ժողովրդի հետ ու ժողովրդի կողքին... Իսկատիպ մտավորական...**

—Նա նաև զգաց արևմտահայությանն սպառնացող ողբերգության վտանգը և դրսևորեց իրեն որպես և՛ հասուն, և՛ ինքնազոհ ազգային գործիչ: Նա թե՛ իր ստեղծագործություններով էր զգոնության կոչ անում՝ ընդգծելով համազգային միասնության հրատապությունը, թե՛ հրապարակային ելույթներով: Ահազանգում էր՝ «Ներսի գաւառներու մէջ կոտորածի վախ կայ, կը լսէ՞ք ԿՈՏՈՐԱԾԻ ՎԱԽԸ»՝ պահանջելով «մարդկօրէն կատղիլ», այսինքն՝ զինված ազատագրական պայքար մղել:

**—Ռուբեն Սևակից պակաս ազնվական չէր նաև կինը՝ գերմանուհի Յաննի Ապելը, որն ամեն ինչ արեց ամուսնուն փրկելու, ապա՝ զավակներին՝ Լևոնին և Շամիրամին, հայեցի դաստիարակելու համար....**

—Այո՛, Յաննին ազնվական կին էր... Նա ամուսնու ձերբակալությունից անմիջապես հետո շտապում է Պոլսի ոստիկանապետի մոտ, ապա՝ գերմանական դեսպանատուն, բայց՝ ապարդյուն, ամենուր պատասխանը նույնն էր. «Դոկտոր Սևակը մեծ ազդեցություն ունի հայ ժողովրդի վրա. իր խոսքերով, իր գրություններով կարող է հայ ժողովրդին ոտքի հանել....»: Գերմանիայի դեսպանը նույնիսկ պախարակել է նրան՝ ասելով. «Դու անարժան գերմանուհի ես, դու դավաճանել ես քո ազգին, ամուսնացել ես այդ հայի հետ և հիմա եկել ես խնդրելու, որ ես նրան փրկե՞մ: Նա չպետք է վերադառնա: Նրանք բոլորը մեռնելու են գնացել»: Եվ Յաննին գերմանական անձնագիրը շպրտել է դեսպանի դեմքին՝ ասելով. «Ես որդի ունեմ ու կդաստիարակեմ նրան այնպես, որ մի օր նա գերմանացիներից վրեժ լուծի հոր համար»: Ի դեպ՝ Երկրորդ աշխարհամարտի ժամանակ Սևակի և Յաննիի որդին՝ Լևոնը, ֆրանսիական բանակի շարքերում կռվում էր Գերմանիայի դեմ....

Ամուսնու մահվան լուրն ստանալուց հետո Յաննի Սևակը երկու երեխաների հետ մեկնում է Ֆրանսիա: Նա հրաժարվում է Գերմանիայի քաղաքացիությունից և անգամ դադարում է գերմաներեն խոսել՝ նույնն արգելելով երեխաներին, իր երեխաներին նա հայկական կրթություն է տալիս: Համոզված էր, որ Գերմանիան Թուրքիայի հետ հավասարապես մեղավոր է միլիոնավոր հայերի նահատակության համար:

*Յաննի Ապելը և Ռուբեն Սևակը*

*Յաննի Ապելը զավակների՝ Լևոնի և Շամիրամի հետ*

**—Սևակի սպանությունից հետո, այնուամենայնիվ, Յաննին չէր հավատում, որ նա չկա, մինչև կյանքի վերջն սպասեց նրան: Գիտենք նույնպես, որ ինքն էլ ստեղծագործում էր և հրատարակել է ֆրանսերեն ժողովածուներ, նաև դերասանուհի էր: Ռուբեն Սևակի համար Յաննին բացառիկ կին էր՝ ներշնչանքի աղբյուր, այդտեղից նաև՝ նրա սիրո պոեզիայի անկրկնելիությունը՝ գեղագիտական արվեստի և խոհազգացական հարստության իմաստով: Սևակի և Յաննիի մեծ սիրո հոգևոր պատմությունն առկա է ոչ միայն նրա պոեզիայում, այլև նամակներում, որոնք ևս աննախադեպ են գեղարվեստական խտացման ու բյուրեղացման առումով: Լինելով բանաստեղծ ու բժիշկ միաժամանակ՝ Սևակն, իսկապես, սիրո մարմնացում էր, ընդ որում՝ սերը ոչ միայն կնոջ՝ Յաննիի նկատմամբ, այլև հայրենիքի, մարդու, աշխարհի հանդեպ: Եվ ինքն էլ դարձավ իր սիրո զոհը....**

—Այո՛, սիրո և մարդասիրության խորհրդանիշ կերպար... Բայց նրան սպանողների մեջ էր նաև այն ավազակապետը, որի աղջկա կյանքը փրկել էր Ռուբեն Սևակը: 1930 թ. Ամերիկայի Բոստոն քաղաքում լույս տեսնող հայկական «Հայրենիք» ամսագրում Հասան անունով մի թուրքի պատմություն հրապարակվեց: Հասանը եղել էր այն կառքի կառապանը, որով սպանելու էին տարել Ռուբեն Սևակին ու ևս չորս հայի: Նրանց թվում էր նաև Դանիել Վարուժանը: Հինգ հայերով և երկու ոստիկաններով կառքն ուղևորվել էր Այաշ քաղաք: Կառապանի խոսքով՝ Սևակին վերջինն են սպանել. նա տեսել է ընկերոջ՝ Դանիել Վարուժանի և մյուսների դաժան սպանությունը: Դահիճների թվում էր նաև ավազակապետ Իսմայիլը, որն իր աղջկա կյանքի համար պարտական էր Ռուբեն Սևակին...

**—Տե՛ր Սևակ, Դուք հարազատության որոշ գծեր ունեք Ռուբեն Սևակի հետ. նկարչական ձիրք, արտաքին նմանություն, քահանայական անուն: Երբ քահանա ձեռնադրվեցիք, արդեն թանգարանի տնօրենն էիք, թե՞ մինչ այդ էլ Ռուբեն Սևակը Ձեզ հետ էր, Ձեր մեջ:**

— Պարույր Սևակն իր գրական անունն ընտրեց ի հիշատակ նրա, ես նույնպես ձեռնադրվեցի որպես Դավիթ սարկավագ և քահանա դարձա նրա անունով՝ տեր Սևակ: Սևակներ շատ կան այսօր ու կլինեն միշտ: Ռուբեն Սևակը, ինչպես սերմն է հողի տակ ձյունից հետո նորից ծլարձակում, իրապես կենդանի է իր մահից հարյուր ինը տարի հետո էլ: Ինքն այլևս մեր ժողովրդի և մեր պատմության անտրոհելի մասն է: Նա իր կյանքի գնով մեր ազգի գլուխը բարձր պահեց, մեր հավատքի սյունը դարձավ, նահատակ դարձավ՝ իր գործով և խոսքով ապացուցելով իրական քրիստոնյա լինելը: Եվ այսօր Ռուբեն Սևակը մեզ շատ-շատ մեծ ասելիքներ ունի, նաև այն առումով, որ ապրելով Եվրոպայում (ինչպես ինքն է գրում՝ Եվրոպան, այդ անբարոն, որ ոսկի է շաղ տալիս անբարոյականության համար) երբեք չդարձավ եվրոպացի, չկրեց այն ազդեցությունները, որ անբարո կյանքի ուղենիշ են, ընդհակառակը՝ Եվրոպայից քաղեց լավագույնը, յուրացրեց բարձր արժեքները՝ պահպանելով իր հայկականությունը:

**—Ի՞նչ արժեքավոր նմուշներ, մասունքներ կան թանգարանում: Գիտենք, որ Ֆրանսիայում՝ Նիցցայում ևս գործում է Ռուբեն Սևակի թանգարան: Ունե՞ք բացառիկ բնօրինակներ:**

—Թանգարանում ցուցադրվում են նահատակ բանաստեղծին պատկանող իրեր, փաստաթղթեր, ածխանկարներ, պատմական ցուցանմուշներ, գրքեր, նաև՝ Հովհաննես Չիլինգիրյանի՝ Մայր Աթոռին նվիրաբերած շուրջ 200 արժեքավոր կտավ: Համալրման գործընթացը շարունակական է:

**—Շնորհակալ ենք, Տե՛ր հայր:**

**Զրուցեց Արփինե ԻՇԽԱՆՅԱՆԸ**

# Կրոնական գործոնի ազդեցությունը զանգվածային մասնակցության վրա Հայոց ցեղասպանության տարիներին

Հայոց ցեղասպանության պատմությունը հսկայական մարդկային զանգվածներին ոճրագործության գործընթաց ներգրավելու պատմություն է: Միլիոնավոր մարդիկ այս կամ այն կերպ մասնակցեցին հայերի բնաջնջմանը. կազմակերպեցին, աջակցեցին կամ իրականացրին նախագիծը: Հասարակ քաղաքացիներին սպանության մղելու համար Օսմանյան կայսրության իշխանությունները տարբեր հնարքների դիմեցին՝ համոզելու մահմեդականներին՝ թուրքերին, քրդերին, կովկասցիներին, որ հայերի ոչնչացումը պետության և ազգի փրկության կարևորագույն նախապայմանն է՝ հայերին վերագրելով բազմաթիվ մեղքեր՝ այդ թվում իսլամի դեմ իբր գործած և գործելիք մեղքերը, մեղադրելով պատերազմում հակառակորդին օգնելու համար, ապամարդկայնացնելով կայսրության հայկական բնակչությանը, ինչպես նաև խրախուսելով զանգվածային մասնակցությունը՝ ոչնչացվող հայերի ունեցվածքի հաշվին հարստանալու հեռանկարով:



Թուրքական հասարակության մեջ ցեղասպանություն իրականացնելու, սպանության գործընթաց ներգրավվելու ցանկությունը մեկ օրում ու հանկարծակի չառաջացավ. այն հիմնված էր դարերով եկած, ամուր արմատացած որոշակի սոցիալական կարծրատիպերի և ընկալման կաղապարների վրա: Բնակչությանը սպանության գործընթաց ներգրավելու բոլոր ջանքերն անարդյունավետ են, եթե դրա համար համապատասխան հող չկա, եթե չկան գաղափարական նախադրյալներ: Գրեթե բոլոր ցեղասպանությունների պարագայում ոճրագործ հասարակություններում պարզ նշմարելի են այն գաղափարները, կարծրատիպերը, որոնք հնարավոր են դարձնում հասարակ մարդկանց հավաքագրումը ցեղասպանական գործողությունների մեջ: Այս նախապաշարմունքները, հասարակության մեջ գոյություն ունեցող ելակետային դրույթները, որոնք կարելի է անվանել նաև «մշակութային արմատներ», շատ կարևոր են, քանի որ տալիս են այն հիմքը, որի վրա հետագայում հնարավոր է լինում կառուցել «ատելության տաճարը», լայնամասշտաբ ու նպատակաուղղված ատելության քարոզչություն իրականացնել:

Նախապաշարումների մի զգալի մասը կապված է կրոնական գաղափարների և զգացումների հետ: Գրեթե բոլոր մեծ կրոններում կա հստակ բաժանում «մենք և նրանք» երկվության մեջ: «Մենք»-ը նույն կրոնը դավանող անհատներն են, իսկ «նրանք»-ը՝ այլադավանները: Քրիստոնեության վրա հիմնված մշակույթներում հաճախ որպես «այլք», «օտարներ» ընկալվում են հրեաները, իսկ մուսուլմանական հասարակությունում՝ քրիստոնյաները, հրեաները և այլ ոչ մուսուլմաններ:

Իսլամը բավականին շատ հնարավորություններ է պարունակում այլադավաններին, այդ թվում՝ քրիստոնյաներին վերաբերվելու որպես ուրացած, մոլորյալ տարրերի, որոնց ճշմարիտ ուղու վրա վերադարձնելն իսլամի պարտականություններից մեկն է: Ընդ որում՝ այդ ճանապարհին հնարավոր է տարբեր միջոցների կիրառումը:

Միաստվածային մյուս կրոնների նման իսլամն ունի թիրախ խմբին նաև որպես արմատապես չար, Աստծո հանդեպ անուղղելի թշնամական վերաբերմունք ունեցող բնորոշելու կարողություն և հետևաբար ունի ցեղասպանության համար մի առանձին հզոր և արդյունավետ օրինականացում հաղորդելու ներուժ: Զանգվածային սպանությունն այս դեպքում հայտարարվում է պատկերացրած «ճշմարիտ եղբայրության և երջանկության իդեալական աշխարհը» իրականություն դարձնելու համար նպաստող գործոն: Զանգվածային սպանությունը դադարում է լինել հանցագործություն և դրա փոխարեն դառնում սրբազան ճշմարտության, բարության և քաղաքակրթության պաշտպանություն:

Ինչպես նշում է ցեղասպանագետ Վահագն Դադրյանը, Ղուրանում առկա «Չկա պարտադրանք հավատքում» արտահայտությունը չեղյալ է հայտարարվել (մենսուխ) Մուհամեդ մարգարեի հետևյալ հրամանով՝ «պատերազմել անհավատների դեմ և դաժան լինել նրանց հանդեպ»: Այն քառյակը, որը նկարագրում է ոչ մուսուլմանների իրավական և քաղաքական կարգավիճակը, որոնց հողերը նվաճել են իսլամական մարտիկները, ասում է. «Մարտնչել նրանց դեմ, ովքեր չեն հետևում ճշմարիտ կրոնին, մինչև որ նրանք կվճարեն ջիզյե, ենթակայի իրավունքով և նվաստացված»: Սա հիմնարար նախապայման է՝ պատերազմն ավարտելու և գթասրտություն ցուցաբերելու համար:

Այս պայմաններում իսլամը դառնում էր զորեղ միջոց, որը կարող էր օգտագործվել հայերի նկատմամբ գոյություն ունեցող բացասական վերաբերմունքը զանգվածային ոչնչացման վերածելու համար:

Հակաքրիստոնեական տրամադրությունները շատ ուժեղ էին օսմանյան հասարակության մեջ: Նրանք հաճախ օգտագործվում էին՝ անկարգություններ ու կոտորածներ կազմակերպելու համար: Օրինակ՝ 1909 թ. Ադանայի ջարդերի ընթացքում մահմեդական հոգևորականները հանդես եկան հատուկ ֆեթվայով, որը հաստատում էր, որ իսլամում ընդունելի է քրիստոնյաների սպանությունը, և կոչ արեցին հավաքված բազմությանը՝ մասնակցել հայերի կոտորածին: Հետագայում թշնամանքը կայսրության քրիստոնյա բնակչության հանդեպ ավելի աճեց: Ընդ որում՝ քրիստոնյաներն ընկալվում էին իբրև մեկ միասնական հանրույթի մաս՝ անկախ ազգային կամ նույնիսկ պետական պատկանելությունից:

Այսպես՝ հայ պատգամավոր Վահան Փափազյանը նկարագրում էր մի իրավիճակ, երբ Իտալիայի և Թուրքիայի միջև 1911-1912 թթ. ընթացող Տրիպոլիտանական պատերազմի ժամանակ հանրության մեջ գերիշխող տրամադրություններն իրենց արտացոլումը գտան նաև Օսմանյան խորհրդարանում: Թուրքերի վերաբերմունքը քրիստոնյաների նկատմամբ վերածվել էր մաքուր ատելության, կարծես դա հայերը լինեին, որ կռվում էին թուրքերի դեմ Տրիպոլիտանիայում: Նույն զգացումներն ավելի ընդգծված արտահայտվեցին Բալկանյան պատերազմների (1912—1913 թթ.) և դրանցում կրած պարտությունների արդյունքում: Ընդ որում՝ պարտություններ այն բալկանյան ժողովուրդների կողմից, որոնք չորս-հինգ դար գտնվում էին թուրքերի իշխանության տակ, և որոնց թուրքերն անվանում էին ոչ այլ ինչ, քան «այգեպաններ», «խոզարածներ» և «ողորմելի անհավատներ»: Թուրք զինվորը վերադառնում էր ճակատամարտից, որտեղ «խաչը» տապալել էր «կիսալուսնին», երեկվա ռայան հաղթանակ էր տարել: Թուրքական քարոզչությունը շահարկում էր մուսուլմանների մոլեռանդությունը՝ նրան ավելի ծայրահեղական բնույթ հաղորդելով:

Արտաքին թշնամին, որը քրիստոնեական տերություն էր, ուղղակիորեն նույնացվում էր սեփական պետությունում ապրող քրիստոնյաների հետ: Եվ օսմանյան իշխանությունները ջանք չխնայեցին՝ օգտագործելու պատերազմի ժամանակ մահմեդականների ընդհանուր հակակրանքը նաև սեփական քրիստոնյա հպատակների նկատմամբ:

Թեև ընդունված է համարել, որ Հայոց ցեղասպանության ճարտարապետները ներշնչված չէին իսլամով, իսկ նրանց գործողությունները պատճառաբանված չէին կրոնական անհանդուրժողականությամբ, սակայն, ինչպես իրավացիորեն նշում է սոցիոլոգ, ցեղասպանագիտության հիմնադիրներից Լեո Քուպերը, երիտթուրքական առաջնորդների մղումները պարփակված չէին միայն քաղաքական փիլիսոփայությամբ, այլ նաև խոր և անգիտակից մակարդակում այն անտեսանելի ազդեցությամբ, որ ուներ մշակութային միջավայրը, որն էլ իր հերթին իսլամական էր:

Բացի այդ՝ իսլամի չափազանց մեծ համախմբող ներուժը չէր կարող չօգտագործվել Առաջին աշխարհամարտի տարիներին, ինչպես նաև ցեղասպանության իրականացման ընթացքում:

Պատերազմի սկզբում՝ 1914 թ. նոյեմբերի 16-ին, ջիհադ հայտարարվեց, ինչը մեծապես նպաստեց կայսրության բնակչության մոլեռանդության ուժգնացմանը: Ջիհադի հայտարարումն առանձնապես մեծ դերակատարում չունեցավ պատերազմի ծավալման տրամաբանության մեջ, քանի որ նրա հիմնական նպատակներից մեկը՝ հանել բրիտանական և ֆրանսիական գաղութներում և Ռուսական կայսրությունում ապրող մուսուլմաններին իրենց մետրոպոլիաների դեմ, չիրականացավ: Սակայն ցեղասպանության իրականացման պարագայում այն բավականին արդյունավետ գործիք հանդիսացավ: Այն օրինական դարձրեց հասարակ, շարքային մուսուլմանի ձգտումը՝ մասնակցելու զանգվածային սպանություններին՝ վերածելով այն նաև կրոնական պարտականության: Հայոց ցեղասպանության ընթացքում բազմաթիվ օրինակների կարելի է հանդիպել, երբ բնակչությունն ուղղորդվում է դեպի սպանության գործընթաց հենց իսլամական կոչերով և հորդորներով:

Օրինակ՝ 1915 թ. ապրիլի 29-ից մայիսի 12-ը օսմանյան խորհրդարանի պատգամավոր Փիրինչիզադե Ֆեյզին այցելեց Ջեզիրեի գյուղերը՝ հորդորելով քրդական ցեղերին կատարել իրենց «կրոնական պարտականությունը»: Ֆեյզին հոջաների աջակցությամբ հրահրում էր բնակչությանը՝ օգտագործելով ավելի շատ կրոնական կոչեր ընդդեմ «անհավատների», քան թյուրքական ազգայնական գաղափարները: Մեկ կարգախոս կրկնվում էր ամենուր. «Աստված, նրանց երեխաներին որբեր դարձրու, իրենց կանանց՝ այրիներ... և տուր նրանց ունեցվածքը մահմեդականներին»: Թալանը, սպանությունները և առևանգումը օրինականացվում էին, թույլատրելի էր հայտարարվում, որ մուսուլմանները վերցնում են անհավատների գույքը, կյանքը և կանանց:

Պատահական չէ, որ հայ բնակչության ոչնչացման քաղաքականության կրոնական օրինականացումը շատ դեպքերում իրականացնում էին անմիջապես կրոնական առաջնորդները, հենց իսլամ հոգևորականներն էին առաջնորդում մուսուլմանների շարասյուները և կոչ անում նրանց պատժել անհավատներին: Հոգևորականները ջարդերից առաջ մզկիթներում մահմեդական ազգաբնակչությանը հորդորել են բազմապատկել ոճիրների, կողոպուտների ու ավերածությունների թիվը՝ ըստ այդմ արժանանալով Մուհամեդի գոհունակությանը: Այդ հորդորները մեծապես նպաստում էին զանգվածների մոլեռանդության աճին, խթանում ջարդարարների գործողությունների ազատությունը՝ պատճառ դառնալով նոր, ավելի մեծ չափերի հասնող ավերածությունների: Մահմեդական հոգևորականների մասնակցությունը կոտորածների իրականացմանն ավելացնում էր բնակչության խանդավառությունը: Կարելի է խոսել նույնիսկ նրանց դերակատարության ավանդույթի մասին, քանի որ նույնանման դրսևորումներ արձանագրվել են նաև համիդյան կոտորածների շրջանում և Ադանայի ջարդերի ժամանակ:

Այսպես՝ Սամսունի ռուսական փոխհյուպատոսը Կ. Պոլսում դեսպան Նելիդովին 1897 թ. մարտի 27-ին զեկուցում է Թոքաթում տեղի ունեցած խժդժությունների մասին ու նշում. «Այս ցավալի իրադարձությունն ամենուրեք մուսուլմանների միջավայրում ուժգին խմորում է առաջացրել, որոնք իրենց միջի առավել ունևորների և մահմեդական հոգևորականության կողմից հրահրվել են կոտորելու հայերին.... Ամասիայում.... տեղական սոֆթաները և մոլլաները եկել են շուկա և սրել տվել դանակները, խանչալները.... բացեիբաց հայտարարելով, թե դա արվում է քրիստոնյաներին կոտորելու համար»:

Կրոնական մոլեռանդության մասին բազմաթիվ հիշատակումներ կան նաև բրիտանական փաստաթղթերում: Այսպես՝ Մերսինում բրիտանական փոխհյուպատոս Լիլիարդոպուլոն հաղորդում է հյուպատոսի պաշտոնակատար Քեթոնին այն մասին, որ «....վալի Խոջա Իզեթ բեյի ժամանելուց ի վեր մոլեռանդությունը հասել է իր գագաթնակետին: Քրիստոնյաներն ընդհանրապես և հայերը մասնավորապես տառապում են դրանից. օր չկա, որ ինչ-որ մի նոր բան չծագի.... Նա փակեց ալկոհոլի մանր առևտրականների համարյա բոլոր խանութները՝ պատրվակ բռնելով, թե դրանք գտնվում են մեչիդի կամ գերեզմանոցի մոտերքում և այլն: Եթե մահմեդականն ուզում է քրիստոնյայից վրեժ լուծել, դրա համար բավական է, որ ներկայացնի երկու վկա, որոնք հաստատեն, թե նա անարգել է մահմեդական կրոնը. սրա համար կամ թե այդ մարդու պատիվը վիրավորելու համար տեղնուտեղը բանտ են նետում»: ➥ էջ 11

# Բռնազավթված հայրենիքի պահանջատիրությունը Հովհաննես Շիրազի պոեզիայում

↩ էջ 8

**Օ՜, չէ, նա է ազգիս ճամփան քարերն**
**ի վեր, ի վեր Մասիս,**
**Թող ամպ ու շանթ գլխիս ոռնան սարերն**
**ի վեր, ի վեր Մասիս,**
**Կտանեմ սիրտս վիրավոր, որպես դրոշ,**
**Մասիսն ի վեր,**
**Թեկուզ մահով՝ կբարձրանամ դարերն**
**ի վեր, ի վեր Մասիս...**

Իր պոեզիայով Շիրազը կորուսյալ հայրենիքի ազատագրումը դարձրեց բացարձակ գաղափար՝ նախանշելով համազգային վերազարթոնքի ուղին, գաղափարական հուժկու հակահարված տալով ժամանակի վարչաքաղաքական հիմնայուններին, գրաքաղաքական մամլիչ պայմաններում չընկրկելով, չզիջելով ոգու կորովը. «Թեկուզ մահով՝ կբարձրանամ դարերն ի վեր, ի վեր Մասիս», կամ՝ «Ձեր լռության դեմ Մասիս եմ գոռում, // Այս էլ քառասուն տարի աննահանջ».

**Մինչ ահաշուք ճչում էին,**
**թե՝ ձեռ քաշենք Մասիսից,**
**Մինչ կուզեին ինձ էլ պոկել**
**աստվածաշենք Մասիսից՝**
**Ես իմ որդոց անունները**
**Սիս ու Մասիս կնքեցի,**
**Որ հավիտյան ելնենք Մասիս՝**
**ձեռ չքաշենք Մասիսից...**

Ազգային հիշողությունը կենսունակ պահող, դիմադարձելու կորով ներարկող բանաստեղծական հզոր արվեստ է սա, տառապանքի և հավատամքի գերագույն պոեզիա, ուր մակընթացությունները չունեն տեղատվություն մինչև վերելքի կամ վերադարձի վերջին հանգրվան: Խոսքի զգացմունքային լիցքը, որին աստիճանաբար միախառնվում է իմաստասիրական խորհրդածությունը, ակունքում ունի նաև ժողովրդական երգի նրբերանգներ. «Ճամփա տվեք, քար ու կապան, // Ճամփա տվեք, ձոր ու ծապան, // Կարոտել եմ Սիփան սարին, // Կարոտել եմ իմ աշխարհին»: Բանաստեղծի խոսք-խորհուրդը մերթ հնչում է որպես պատգամ. «Ինձ հոգեհանգիստ կատարեք միայն Մասիսի վրա», մերթ որպես կտակ. «Քեզ Մասիսն եմ կտակում, որ դու պահես հավիտյան», մերթ որպես վերջին հրահանգ ու իղձ. «Ինձ թաղեք միայն Մասիսի լանջին», մերթ որպես ողբերգական տարակույսից ճառագող հույսի ցոլք. «Ո՞նց կարող է գերի մնալ Արարատդ վիթխարի, // Վաղն օրոցքից դուրս կոստնես ժայռից ելքով Միերի»: Հաջորդում են խոսքի պատկերային գյուտերը՝ խոհազգայական խտացվածքով, համապատկերային ընդգրկումներով. «Եվ իմ միակ տաճարն անմեռ.... // Հայաստանն է հազարալեռ՝ // Մասյաց մարմար գմբեթներով», կամ՝ «Հայոց վշտիս կշռաքարը լոկ Մասիսը կլինի»:

Շիրազի ծրագրային հայրեներգությունն ունի աշխարհաքաղաքական որոշակի նախադրյալներ՝ կապված Երկրորդ աշխարհամարտի հետ: Գերազանցելով իր մեծ նախորդին՝ Չարենցին՝ «Ես իմ Մասիս սարն եմ սիրում», Շիրազը վերահաստատում էր ազգային հայրենասիրական բանաստեղծության դիմագիծը՝ «Ես իմ Մասիս սարն եմ

պաշտում», և դա ոչ միայն հստակ վերջնակետ նշմարող գրական-գաղափարական ընթացք էր, այլև նոր ու նորովի սկիզբ. «Այնքան պիտի Մասիս գոռամ, մինչև ես էլ մասիսվեմ...»:

Բանաստեղծի հայրենաորոնումի և հայրենագտնումի ներքին ձգտումը համահավասարվում է միստիցիզմի. ընդ որում՝ հայրենավերագտնումի ոգեղեն ճանապարհին ուղեկից է ժամանակային որոշակի պահի տեսլականը, որ Էրգիր տանող գաղափարի ընթացքի վերջնակետն է.

**Ինձ էլ բերեք այն սուրբ ձյունից՝ իմ հուշերի արցունքով,**
**Երբ կազատեք՝ լուրն ինձ բերեք ոչ թմբուկով, ոչ շուքով,**
**Քանզի սիրտս շատ է մաշվել Արարատի կարոտից,—**
**Որ չմեռնեմ խնդությունից՝ լուրն ինձ բերեք շշուկով...**

Այսպես՝ զգայությունը հասնում է զգայավառության, զգայավառությունը՝ տեսիլի, տեսիլը՝ ներկայի մեջ եզրավորվող գալիքի առարկայական պատկերի: Բանաստեղծն ավելի շատ խոսում է գալիքի սահմանից.

**Որդիներիս Աղթամարա վանքում պիտի**
**պսակեմ,**
**Մայր Անիիս ավերակի՝ կյանքում պիտի**
**պսակեմ,**
**Ոչ ուրիշի ծովն եմ տենչում, ոչ նույնիսկ**
**հովն ուրիշի,**
**Նավակներս Վանա ծովիս գրկում պիտի**
**պսակեմ:**

Շիրազի հայրենասիրական պոեզիայի հիմնահարցերից է նաև ժամանակի ու տարածության պատահականությունների քմահաճույքին դատապարտված սփյուռքահայության ինքնության պահպանման խնդիրը: Որպես երաշխիք՝ վերահիմաստավորվում է լեզու—հայրենիք միասնությունը. «Ով Արարատ ունի սրտում՝ իր հայ լեզուն չի մոռանա»: Սպիտակ ջարդի դեմ Շիրազը բարձրացնում է պատմական հայրենիքի ազատագրման և սփյուռքահայության վերադարձի գաղափարը. «Քարավանվենք ազգովին դեպի Մասիսն իմ հույսի, // Աստղերն իբրև մոմ վառենք գմբեթի տակ Մասիսի»: Ազգի բարոյական մեծությանը զուգակշիռ՝ Շիրազն ընդգծում է քանակական զորության անհրաժեշտությունը՝ որպես կորուսյալ հայրենիքի իրավաքաղաքական պահանջատիրության նախապայման. «Մեկին յոթը թե ծնեք ձեր արյունից, // Լոկ այն դարում մայր հողը ետ կխլեք ոսոխից»: Ազգային վերելքի ճանապարհին Շիրազը հրապարակախոսական հնչեղության է հասցնում ազգի հավաքականության սկզբունքը. «Ազգահավաքն, իմացեք, փրկությունն է մեր միակ»:

Շիրազի պատմահայրենասիրական պոեզիայում մշտապես առկա է Հայոց ցեղասպանության արդար հատուցման պահանջատիրությունը.

**Քրիստոսին խաչող Հուդան վերածնվի՝**
**կխաչեմ,**
**Մեղք կա, դարեր էլ հնանա, չի փրկվի՝**
**կխաչեմ,**
**Իմ սուրբ ցեղը եղեռնողի մեղացն**
**ամ ու ժամ չկա,**
**Հազար տարվա իր սև մեղքն էլ**
**ով չքավի՝ կխաչեմ:**

Եղեռնի հիշողությունը, որ մշտապես ուղեկցել է բանաստեղծին կյանքի ճանապարհին, ի վերջո գեղարվեստական համապատկերի է վերածվում «Հայոց դանթեականը» տեսլապոեմում: Ցեղասպանության և դանթեական դժոխքի զուգորդումը հայ պոեզիայում, որ սկզբնավորվում է Յարճանյանից և Չարենցից, ծայրահեղ շիկացման է հասնում Շիրազի պոեմում՝ դառնալով դժոխքի դժոխք: Պոեմը ցեղասպանության հետքերով տեսիլային ճանապարհ է կորուսյալ հայրենիքի միջով. եղեռնապատումի տեսլապատկերներին զուգահեռ՝ Շիրազը անուն առ անուն ամրագրում է հայոց կորուսյալ հողերը, պանծացնում Անդրանիկի ազգային-ազատագրական պայքարը: Վրեժի ու հիշողության ցավի ներքին ցասումով բանաստեղծն աղաղակում է.

**Ես էն դարի սրտին պիտի**
**Փորագրեմ, որպես վերքեր,**
**Որպես հետքերն հայոց վշտի՝**
**Երեք միլիոն հայ անուններ,**
**Որ մորթվեցին յաթաղանով**
**Քար մարդկության աչքի առաջ,**
**Հարբած հայ ծով արյան գինով՝**
**Այն օրերում հայահառաչ,**
**Որ դարերից ծանր էր վշտով՝**
**Հայաստանով այն ամայի,**
**Խլված հազար լեռ ու դաշտով...**
**Ու ոսոխի սրտին պիտի**
**Ես դեռ փորեմ, փորեմ, փորեմ,**
**Որպես վիհերն Արարատի,**
**Երեք միլիոն հայ անուններ...**

Համապատկերային այս պոեմի հիմքում ցեղասպանության պատմավավերական դրվագներն են, մեծածավալ ընդգրկումներն ու համապատկերայնությունը նկատի ունենալով՝ այն կարող ենք համարել նաև չափածո պատմական տեսլավեպ: Առաջին անգամ հայ գրականության պատմության մեջ Հայոց ցեղասպանության զոհերի քանակ նշվում է ոչ թե մեկ ու կես միլիոնը, այլ երեք միլիոնը: Նահատակաց այս թիվը հայության հանդեպ Թուրքիայի հետևողական ցեղասպան քաղաքականության հետևանք է, և Շիրազը պոեմում վերափաստարկում է այն հայեցակետը, որ հայերի ցեղասպանություն տեղի է ունեցել ոչ միայն 1915-ին.

**Հազար հազարներ էին ցնցոտի,**
**Հազար հազարներ՝ բոկոտն, անոթի,**
**Ընթանում էին և՛ ըմբոստ, և՛ հեզ,**
**Ձենքերը խլված գերի զորքի պես:**
**Ծովացած ամբոխն ասես լեռան տակ**
**համր կռանում,**
**Իր մեջքին առած անտես վիթխարի իր**
**խաչն էր տանում...**

«Հայոց դանթեականը» գրվել է շուրջ քառասուն տարվա մտալլկանքի ընթացքում՝ ապրումների բազմասևեռ դրսևորումներով, ողբի և վրեժի համակշիռ տարերքով: Պոեմի բոլոր գլուխները խորագրված են գիշերապատկերներով, ինչպես՝ գիշեր վշտահուշի, Գողգոթայի, խաչելության, հառաչանքի, անեծքի, խարանքի, մեծ մռունչի և այլն: Պատկերավորության և բառարարության այն տարափը, որով գրված է «Հայոց դանթեականը», հղացվել ու բյուրեղացվել է տասնամյակներ շարունակ.

**Ես դեգերում եմ դժոխք առ դժոխք,**
**որ չմոռանաք**
**Ահեղ եղեռնի լաբիրինթները Լեթային**
**չտաք,**
**Վրեժի թուրը պատյան չդնեք երբևէ,**
**քանզի**
**Հայոց թրերի միակ պատյանը ձյունն է**
**Մասիսի...**

Առաջին տարբերակը գրվել է 1941 թ., բայց ամբողջությամբ՝ ավելի քան 8000 տող, լույս տեսավ Երևանում 1990 թ.: Պոեմը ոչ միայն ողբագիրք է, այլև ծրագրային ու գործնական դատաստանագիրք, որով դատապարտվում են Հայոց ցեղասպանությունն ու աշխարհաքաղաքական վերաբերմունքը այդ հիմնախնդրի հանդեպ: Ցեղասպանության համաճանաչման ու հատուցման միտումով Շիրազը դիմում է աշխարհի գերտերություններին՝ ԱՄՆ-ին, Բրիտանիային, Ֆրանսիային, Գերմանիային, Իտալիային, Հնդկաստանին, Չինաստանին՝ պատմական արդարության վերականգնման և նոր ցեղասպանության կանխման պահանջատիրությամբ՝ ընդսմին գիտակցելով, որ աշխարհը կառավարվում է գերշահի ներքին քաղաքականությամբ: Ուշագրավ է, որ պոեմում Շիրազը հայոց խլված հողերի համապատկերում հիշատակում է նաև Ղարաբաղն ու Նախիջևանը՝ բարձրաձայնելով թուրք-ադրբեջանական ցեղասպան քաղաքականության հետևանքով Հայաստանի տարածքային կորուստները:

Հովհաննես Շիրազի պատմահայրենասիրական պոեզիան տարերային երևույթ է 20-րդ դարի հայ բանաստեղծական անդաստանում, որ այսօր և հավիտյան վառ է պահելու Էրգիր տանող ճամապարհի կերոնները:

**Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
**բ. գ. թ., դոցենտ**

# Կրոնական գործոնի ազդեցությունը զանգվածային մասնակցության վրա Հայոց ցեղասպանության տարիներին

↩ էջ 10

Հաճախ կրոնական պատճառաբանությամբ սպանություններին տրվում էր ծեսի բնույթ: Նման հիշատակում կա ռուսական դեսպանության՝ 1895 թ. դեկտեմբերի 14-ին գրված մի զեկուցագրում. «....Չիչմեում խնայվել էր քառասուն անվանի հայերի կյանքը, որոնց թույլ էին տվել ապաստանելու եկեղեցում: Սակայն մի շաբաթ անց շեյխերից մեկը, դատապարտելով այդ քառասուն հայերի հանդեպ դրսևորած չափավորությունը, նրանց առաջարկեց մահմեդականություն ընդունել: Հայերը հրաժարվեցին: Շեյխը հրամայեց, որ նրանց մեկը մյուսի հետևից սպանեն եկեղեցու շեմին: Նա եկեղեցու մոնթին և մի ուրիշ հայի ստիպեց ներկա լինել այդ սպանությանը, իսկ ապա կարգադրեց, որ նրանց դիակները ոտներին թոկ գցած քարշ տան տանեն դեպի գետը: Շեյխն այդ բանը բացատրել էր, թե՝ «շուն գյավուրներին ձեռք տալ չեմ ուզում, որ չպղծվեմ»:

Կրոնական նշանակալի գործոնի առկայության մասին վկայում են նաև քրիստոնեական հաստատությունների դեմ կատարված ոտնձգությունները: Այսպես՝ 1895 թ. հոկտեմբերի 20-ին Դիարբեքիրում Ֆաթիհ փաշայի մզկիթից դուրս գալով՝ ելուզակներն ավերել են Ս. Սարգիս եկեղեցին՝ դաժանությամբ կոտորելով հոգևորականներին:

Այն, թե ինչ նշանակություն ուներ կրոնական գործոնը մուսուլմանական զանգվածների համար Հայոց ցեղասպանության ընթացքում, ցույց է տալիս մի հետաքրքիր դրվագ, որ պատմվում է ռուսական «День» թերթում: Թղթակիցը, մեջբերելով Խլաթում հանձնված թուրքական բանակի մի լևանտացի քրիստոնյա բժշկի օրագիրը, նկարագրելով սարսափելի պայմանները, որում գտնվում են և ստիպված են կռվել օսմանյան բանակի զինվորները, նշում է, որ «....այդ սովահար, ուժասպառ մարդիկ միավորվել էին սոսկ «գազավաթի»՝ քրիստոնյաների դեմ սրբազան պատերազմի ընդհանուր գաղափարով, որն այստեղ՝ փոքրասիական այս խուլ վայրերում, դեռ ընդունակ է

# Հայոց ցեղասպանության արձագանքը թուրքական հուշագրության եւ գեղարվեստական գրականության մեջ

20-րդ դարասկզբի Հայոց ցեղասպանությունը թուրքական իշխանությունների կողմից ծրագրված և հետևողականորեն իրագործված եղեռնագործություն էր: Պատմաքննական և արխիվային բազմաթիվ աղբյուրներ հավաստում են անհերքելի մեկ իրողություն. թուրքերը ցեղասպանեցին արևմտահայությանը՝ տիրանալու մեր բնիկ հայրենիքին:

Թուրք քաղաքական-հասարակական գործիչները, պետական ղեկավարներն անդրադարձել են դարակազմիկ այս իրողությանը՝ հիշողությունների տարեգրությունը կազմելիս անթաքույց ներկայացնելով իրենց գազանային, ապամարդկային էությանը հատուկ գործելակերպը:

Աբդուլ Համիդի անձնական գրագիր Թահսին փաշան իր հուշերում պատկերում է արյունարբու սուլթանի անհագուրդ ատելությունը հայ ժողովրդի ստեղծագործ ոգու հանդեպ: Քողարկելով թուրքական պետական հրեշավոր քաղաքականության աններելի հետևանքները՝ այս թուրք պաշտոնյա-գրագիրը հայերի դեմ սանձազերծված գործողությունները պատճառաբանում է որպես արտաքին ուժերի ներգործության և հրահրության կանխարգելում. «Հայերը դրսից ստացած օգնության ու փողի միջոցով երկրում խառնակչություններ էին կազմակերպում՝ այսկերպ ցանկանալով օրինականացնել Եվրոպայի միջամտությունը օսմանյան գործերին» (տես Tahsin Paşa, Yıldız hatıraları (hazırlayan: Ahmet Zeki İzgöer), İstanbul, 2015, էջ 69):

Աբդուլ Համիդի անձնական բժիշկ Աթֆ Հուսեյն բեյն իր հուշերում նշում է, որ գահընկեց սուլթանն աքսորի տարիներին ևս «վառվել» է Հայկական հարցով և «կարմիր կենդանու» բնազդով՝ Հայոց ցեղասպանության տենչանքով ապրել:

Հայոց ցեղասպանության անմիջական կազմակերպիչ, երիտթուրքական կառավարության ռազմածովային գործերի նախարար Ջեմալ փաշան՝ «արյունոտ մսագործը», Եվրոպա փախչելուց հետո սկսել է հուշեր գրել, որն առաջին անգամ տպագրվել է գերմաներեն Բեռլինում 1919 թ.: Թշնամիների հանդեպ պետական կեղծ բարյացակամության թեզի շրջանակներում Ջեմալ փաշան հայերին առավել է դասում հույներից ու բուլղարներից և վեր հանում հայի բարոյական ու արժանապատիվ նկարագիրը. «Մենք հայերին և, հատկապես, հայ հեղափոխականներին հույներից ու բուլղարներից առավել ենք սիրում, քանի որ նրանք այդ երկուսից ավելի մարդկային ու հերոսական են: Երկերեսանի չեն: Ընկերների նկատմամբ հավատարիմ են, թշնամիների նկատմամբ՝ անբեկում»: Խոսելով 1894–1896 թթ. համիդյան կոտորածների, 1909 թ. Կիլիկիայի ջարդերի և 1915 թ. Հայոց ցեղասպանության մասին՝ Ջեմալ փաշան հայերին մեղադրում է մուսուլմանների շրջանում հոգեբանական մեծ սարսափի տարածման և ֆիզիկական սպառնալիք լինելու շինծու դրույթների համատեքստում: Մինչև իսկ հիշատակում է 1908 թ. հետո երկրի ազատականացման պայմաններում Մուշեղ քահանայի (խոսքն այդ օրերին Արաբկիրի ու Ադանայի հոգևոր առաջնորդ Մուշեղ եպս. Սերոբյանի (1869–1951) մասին է, որ եղել է Ռամկավար ազատական կուսակցության հիմնադիրներից) հրահրած հակաթուրքական տրամադրությունների, եվրոպական հրացաններով ու ատրճանակներով հայերին զինելու մասին: Փորձելով հայապաշտպան կեցվածք որդեգրել՝ դիվանագետ փաշան համարձակվում է ցնորամտության փոխակերպված արդարությունն ու գործած ողորմությունների գաղտնիության հոգևորությունն առավել արժանահավատ համարել, քան հանդես գալ որպես թուրքանպաստ գործիչ:

Դիարբեքիրի նահանգապետ բժիշկ Ռեշիդը, որ բանտում հայտնվելու ժամանակ պահել է օրագիր, անդրադարձել է Հայկական հարցին՝ թուրքական դասական ժխտողական թեզերը շարադրելով, բոլոր ոճրագործությունների համար մեղադրելով «ցարականության գործիք» հայերին, և ներկայացրել տեղահանության պատվերի ու այդ ընթացքում կատարված հանցանքների ու պաշտոնի չարաշահումների մասին:

«Միություն և առաջադիմություն» կուսակցության հիմնադիրանդամ Միդհաթ Շյուքրյու Բլեդան՝ Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից մեկը, «Կայսրության անկումը» կոչվող հուշերի ժողովածուում արձանագրում է Դիարբեքիրի նախկին նահանգապետ դոկտոր Ռեշիդի հետ ունեցած զրույցը, որը ցեղասպանության եղելության ու դրանում օսմանյան պաշտոնյաների բացահայտ ներգրավման անհերքելի ապացույց է:

Հանրապետական Թուրքիայում ժողովրդական պատմագրության հիմնադիր Ահմեթ Ռեֆիք Ալթընայը (1881–1937) իր հեղինակած փոքրածավալ հուշագրությունների մեջ խոսում է երկուստեք զոհերով հայ-թուրքական կոտորածների մասին (տես Ալթընայ Ա. Ռ., Երկու կոմիտե՝ երկու ոճիր, Երևան, 1997): Խոսելով Վանի ապստամբության մասին՝ թուրք պատմագիրը նշում է, որ իշխանությունները պետք է պատժեին միայն մեղավորներին, այլ ոչ թե ընտրեին Արևելյան հարցի լուծման ամենահեշտ տարբերակը՝ մի ամբողջ ժողովրդի տեղահանությունը՝ առանց մանրամասնելու տեղահանության կերպը և ուղեկցվող պատժիչ գործողությունների սարսափելիությունը: Ալթընայն անդրադառնում է նաև Գրիգոր Զոհրապի սպանությանը: Չերքեզ Ահմեթը հպարտությամբ խոստովանել է, որ Դիարբեքիր տանող ճանապարհին քարով այնքան է հարվածել Զոհրապի գլխին, որ վերջինս մահացել է: Չարագործ Ահմենն այս ոճիրը համարել է հայրենասիրություն և հակադրվել երիտթուրքական շարժման առաջնորդներին. «Ես ծառայել եմ իմ հայրենիքին: Վանն ու շրջակայքը Քաաբա լիճ եմ դարձրել: Այսօր դու այնտեղ նույնիսկ մի հայ չես կարող գտնել: Ես ծառայել եմ հայրենիքիս, իսկ Թալեաթի նմանները Ստամբուլում նստած գարեջուր են խմում, մինչ ես կալանքի տակ եմ»: Թուրք հանցագործը Գրիգոր Զոհրապին սպանելուց հետո կողոպտել է նրա ձեռքի ժամացույցը, մատանին ու պայուսակը՝ վաճառելով Ուռհայի շուկայում:

Հետաքրքրական է 20-րդ դարասկզբի ամենահայտնի թուրք քաղաքական ու հասարակական կին գործիչ Հալիդե Էդիփի գրական ժառանգությունը: Նա Ջեմալ փաշայի հրամանով կանչվել էր Սիրիա և Լիբանան՝ որբ հայ երեխաների բռնի իսլամացման գործն իրականացնելու համար: Որպես աքսորյալ հայերի հանդեպ բարյացակամության դրսևորում՝ Էդիփը գրում է, որ Ջեմալ փաշան հայ երեխաներին տեղավորում էր թուրքական որբանոցում՝ փոխելով նրանց անուններն ու կրոնը: Այդ որբերից մեկը՝ Թորոս Թադևոսյանը, հիշելով որբանոցային կյանքը, հետագայում գրել է. «Մեզ դաստիարակում են մոլեռանդ թուրքեր, սովորեցնում թունդ շովինիստական ազգային երգեր՝ թուրք ազգի անցյալն ու ներկան գովերգող և պանթուրքիզմն ու պանիսլամիզմը գովաբանող» (Զոն Կիրակոսյան. Անկախ պետականության և քաղաքական հայագիտության ակունքներում, Երևան, 2009, էջ 299): Էդիփը նաև անդրադառնում է Կոմիտաս վարդապետին՝ նրան անվանելով «հայերի մեծ առաջնորդ», «անատոլիական բանահյուսության ու երաժշտության մարմնացում», «հայ ազգայնական»: Ըստ նրա՝ Կոմիտասը հաճախակի է այցելել իրենց տուն, անգամ Էդիփի ամուսին բժիշկ Ադնանը Թալեաթ փաշայից թույլտվություն է ստացել՝ Կոմիտասին ուղարկելու Փարիզ՝ բուժվելու:

Այսպիսով՝ Հայոց ցեասպանության մասին թուրքական հուշագրության և գեղարվեստական գրականության մեջ թուրք հեղինակներն ինչքան էլ փորձում են քողարկել թուրքական ոճրագործության ծրագրված լինելը և ջանում «պաշտպանության» կամ «զոհի» անունից դիրքավորվել և հանդես գալ, բազում են ուղղակի և անուղղակի վկայությունները, որոնք իսկ հակասական են դարձնում իրենց ազգային թեզերը՝ հայերին տեղահանելու և սաստիկ կտտանքների ու խոշտանգումների ենթարկելու վերաբերյալ:

**Օֆելյա ԳԱՍՊԱՐՅԱՆ**
**Նարեկ սրկ. ԳԱՍՊԱՐՅԱՆ**

*Աստվածաշունչ՝ գիրք գրոց*

Դու մեղաւորների ապաշաւները կը փշրես:
Տիրոջից է փրկութիւնը,
Քո օրհնութիւնը ժողովրդիդ վրայ թող լինի:
Սաղմոս 3:8-9

Աչքի տեղ՝ աչք, ապամի տեղ՝ ապամ,
ձեռքի տեղ՝ ձեռք, ոտքի տեղ՝ ոտք,
Խարանի տեղ՝ խարան,
վէրքի տեղ՝ վէրք,
հարուածի տեղ՝ հարուած:
Ելից 21:24-25

## ՏՕՆՔ ԵՒ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ

**ՄԱՅԻՍ**


† ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ Քրիստոսի Աստուծոյ մերոյ — *մայիս 9*

† ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ Պենտեկոստէ — *մայիս 19*

† Սրբոց կուսանացն Հռիփսիմեանց — *մայիս 27*

† Սրբոց կուսանացն Գայիանեանց — *մայիս 28*

† Տօն Սրբոցն Յովհաննու Կարապետին եւ Աթանագինեայ եպիսկոպոսին (Ս. Շողակաթ) — *մայիս 30*


## Անտիպ նամականի....

↩ էջ 4

....խնդրելու տեղւոյդ Անգլիական կառավարութենէն որ Շէյխ-իլ-Իսլամութեան դատարանի մը բարձր դիրքին հաւասար դիրք ունեցող ատեանի մը առջեւ տեսնուի այս դատը եւ ոչ թէ վերջերս հող տեղական տարրերով կազմուած նախնական դատարանին առջեւ:

4.— Կայս. Իրատէի մասին փաստաբաններու ըսածն ալ կրնաք աւելցնել ի շարս այս առարկութեանց:

Վանքը արդեօք կալուածագրեր ունի ի ձեռին, յիշեալ գետնին համար: Եթէ ունի, լաւ կը լլլար որ անոնց պատճէնները մեզի ղրկուէին փութով:

Իսկ Ճէմալ Փաշայի խնդիրը բոլորովին բռնապետական արարք մըն է որ ոչ մէկ օրինական տեսակէտի կրնայ ենթարկուիլ: Այն ձեւով ինչպէս որ առնուեր է արտին ծանօթ մասը, նոյն կերպով պէտք է վերադարձուի վանքին, առանց դատաստանի, քանի որ ակներեւ է թէ եղածը բռնութեան եւ սպառնալիքի տակ կատարուած յափշտակութիւն մըն է լոկ: Ըստ Ազգ. Սահմանադրութեան որ Կայս. Իրատէով վաւերացուած եւ Պետական Օրինագրքին մէջ անցած է, մեր ազգային սեփականութիւնները չեն կրնար վաճառուիլ, ուր մնաց նուիրուիլ, առանց կարգ մը օրինական գործողութեանց, ինչպէս ժողովներու որոշում, պատրիարքական արտօնութիւն, եւ այլն:

Յառաջիկային կը գրեմ Լոնտոնի մէջ կատարելիք հետազօտութեանցս եւ դիմումներուս մասին:

Օգտուելով առիթէն, կը կրկնեմ հեռագրով ըրած շնորհաւորութիւններս ի մասին Ձերդ Բարձր Սրբազնութեան ընտրութեան որ մեծ բախտաւորութիւն մըն է Ս. Յակոբեանց Վանքին ու Միաբանութեան համար: Փշալից պաշտօն մըն է որ կը վիճակի Ձեզի, այն դժուարին պայմաններուն մէջ որոնց ենթակայ է այս միջոցիս Ս. Երուսաղէմի Աթոռը: Կը մաղթեմ որ օր առաջ յաջողիք կարգադրել Վանքին պարտուց խնդիրը եւ ապահով պիւտճէ մը կազմելով ձեռնարկէք այն բարենորոգչական աշխատութեանց զորս Ազգը կը սպասէ Ձեր բարձր յատկութիւններէն ու կարողութենէն, եւ մանաւանդ ժառանգաւորաց վարժարանի վերակազմութեան:

**Մնամ որդիական յարգանօք**
**Գաբրիէլ Նորատունկեան**

**16 փետրուար, 1924**

Հայրական սրտի ուրախութեամբ պատիւ ունինք աւետել Ձեր Վսեմութեան, թէ տեղւոյս Հողային Դատարանը, Կարկուրեան ծանօթ դատի մասին արձակեց իր վճիռը ի նպաստ Ս. Աթոռոյս, ամսոյս 12-ին, գլխաւորաբար հիմնուելով դատին ՄԻՒՈՒՐԸ ՁԷՄԱՆԻ հանգամանքին վրայ: Այս կերպով անգամ մը եւս հաստատուեցաւ Մեծ-Արտին վրայ Ս. Աթոռոյս ունեցած սեփականութեան անժխտելի իրաւունքը:

Յանձնարարած ենք Վանուցս Փաստաբաններուն, փութով ներկայացնել մեզ Դատական վճռագրին օրինակը, որպէսզի անմիջապէս պատճէնը ղրկենք Ձեր Վսեմութեան:

Այս մեծ յաջողութիւնը կը պարտինք միեւնոյն ատեն Ձեր Վսեմութեան իմաստուն խորհուրդներով եւ օգտակար թելադրութիւններով ձեռք առնուած միջոցներուն, եւ վերջին անգամ Կ. Պոլսոյ մեր փոխանորդ Գեր. Տ. Սմբատ Ծ. Վարդապետի եւ Մեծ, Յարութիւն Էֆէնտի Մոստիչեանի մասնաւոր ջանքերով ձեռք բերուած կարեւոր վաւերագրի մը, որ մեծապէս օգտակար եղաւ հաստատելու ՄԻՒՈՒՐԸ ՁԷՄԱՆԻ գոյութիւնը:

Առ այժմ կը բաւականանանք այս կարեւոր յաջողութիւնը հաղորդելով մասնակից ընել Ձեր Վսեմութիւնը, ամբողջ Ազգին համար կենսական հարցի մը բարեյաջող ելքին առթած ուրախութեան:

Նուիրելով մեր հայրական ջերմագին Օրհնութիւնները, սրտագինս կը մաղթենք որ Բարձրեալն Աստուած պարգեւէ Ձեր Վսեմութեան երկար եւ երջանիկ տարիներ, եւ արդիւնաւորէ Ձեր ազգանուէր աշխատութիւններն ու բարի ջանքերը:

Ողջունիւ Սիրոյ, Աղօթարար
ՊԱՏՐԻԱՐՔ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեան

**Հրատարակության պատրաստեց**
**Սիլվա ՍՈՒՔԻԱՍՅԱՆԸ**


**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝** Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝** «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝** Նարինե Հովհաննիսյան
**Գրանցման վկայական՝** 624
**Խմբագրության հասցեն՝** Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հեռախոս՝** (010) 517 280
**Էլ. փոստ՝** qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
**web կայք՝** krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 2.05.2024 թ.
**Տպաքանակը՝ 1265**